15.qxd 18/07/2026 20:00 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 17 հուլիսի 2026թ. թիվ 15 (643)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի եւ Վարդենիս համայնքներում 2026 թվականի հունիսի 29-ից տրվեց ամառային զորակոչի մեկնարկը: Մարտունու զինվորական կոմիսարիատի շենքում նորակոչիկներին բանակ ճանապարհելու հանդիսավոր արարողությանը մասնակցել, ողջունել, շնորհավորել ու հաջողություններ են մաղթել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը, ՀՀ ՊՆ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար Արմեն Մնացականյանը, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության գլխավոր վարչության Մարտունու բաժնի պետ Ստեփան Հակոբյանը, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի Մարտունու տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Գեւորգ քահանա Բարսեղյանը, պաշտոնական այլ անձինք, նորակոչիկների ծնողներն ու հարազատները:

-Իմ խնդրանքն ու հորդորն այն է, որ լինեք չափազանց հոգատար ձեր ծառայակից ընկերների հանդեպ, անվերապահորեն կատարեք ձեր հրամանատարների հրամանները, դպրոցում ստացած ձեր գիտելիքներն ու կարողությունները առավելագույնս օգտագործեք հայրենիքի ծառայության ընթացքում: Բարի երթ, խաղաղ ու անվտանգ ծառայություն եմ մաղթում բոլորիդ,-նորակոչիկներին դիմել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

Վարդենիսում նորակոչիկներին բանակ ճանապարհելու հանդիսավոր արարողության մասնակցել ու նորակոչիկներին հաջողություններ են մաղթել Վարդենիս համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակ Մկրտչյանը, ՀՀ ՊՆ Վարդենիսի զինվորական կոմիսար Կամսար Հարությունյանը, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության գլխավոր վարչության Վարդենիսի բաժնի ներկայացուցիչներ, պաշտոնական այլ անձինք, նորակոչիկների ծնողները եւ հարազատները:

Սեւան համայնքից ժամկետային զինծառայության մեկնող տղաներին ճանապարհելու էին եկել Սեւանի համայնքապետարանի եւ Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչները, որոնց բարեմաղթանքներին միախառնվել էին խորհուրդներն ու հորդորները:

Սեւանի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում կատարվել է նորակոչիկների օրհնության կարգ, որին հետեւել է Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի՝ նորակոչիկների համար պատրաստված նվերների հանձնումը:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԴԻՊԼՈՄՆԵՐ ԵՎ ԳՈՎԱՍԱՆԱԳՐԵՐ ՀԱՆՁՆԵՑ ՄԱՐԶԻՑ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ ՀԱՂԹԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Հուլիսի 8-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց 2025-2026 ուսումնական տարում Գեղարքունիքի մարզից հանրապետական օլիմպիադայում դիպլոմների եւ գովասանագրերի արժանացած աշակերտներին եւ նրանց դպրոցների տնօրեններին:

Ողջունելով ու շնորհավորելով հյուրերին՝ մարզպետը նշեց, որ հանրապետական օլիմպիադայում ձեռք բերված արդյունքները ապահովվել են նպատակասլաց ու ջանադիր աշխատանքի շնորհիվ, իսկ հաղթանակներ գրանցած աշակերտներն իրենց գիտելիքները ծառայեցնելու են թե՛ Հայաստանի Հանրապետության զարգացմանը, թե՛ հանրային բարօրությանն ու անձնական բարեկեցությանը:

Այնուհետ Կարեն Սարգսյանը ծանոթացավ հանրապետական օլիմպիադայում դիպլոմների եւ գովասանագրերի արժանացած աշակերտներին, հետաքրքրվեց նրանց մասնագիտական կողմնորոշմամբ, զրույց ծավալեց դպրոցների տնօրենների հետ՝ հաղթած աշակերտների ուսուցիչներին խրախուսելու եւ այլ հարցերի շուրջ: Մարզպետը նաեւ վստահեցրեց, որ ՀՀ կառավարության ջանքերով շարունակվելու են դպրոցաշինական ծրագրերը, որոնց արդյունքում արդիականացվելու են Գեղարքունիքի մարզի դպրոցական ու նախակրթական բոլոր հաստատությունները:

Անձամբ հանձնելով բոլոր դիպլոմներն ու գովասանագրերը՝ մարզպետ Կարեն Սարգսյանը հաջողություններ մաղթեց հանրապետական առարկայական օլիմպիադայում հաջողություններ գրանցած աշակերտներին:

2025-2026 ուստարվա առարկայական օլիմպիադայում Գեղարքունիքի մարզի դպրոցականներն արժանացել են 13 դիպլոմի եւ 16 գովասանագրի: Հաղթած աշակերտները ներկայացնում են Մարտունու թիվ 1 եւ 2, Սեւանի թիվ 1, Ճամբարակի թիվ 2 հիմնական, Գավառի թիվ 2, Գեղամավանի, Կարմիրգյուղի թիվ 2, Ներքին Գետաշենի թիվ 1 եւ թիվ 2, Դդմաշենի, Գանձակի թիվ 1, Լիճքի, Ծովագյուղի, Զոլաքարի թիվ 2, Սարուխանի թիվ 1 եւ Արծվանիստի միջնակարգ դպրոցները:

ԱՍՏՂԱՁՈՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր գյուղը Հայաստանի հնագույն այն բնակավայրերից մեկն է, որտեղ մարդկային կյանքը սկզբնավորվել է անհիշելի ժամանակներից ու հազարամյակների ընթացքով հասել մինչեւ մեր օրերը:

Աստղաձորը գտնվում է ծովի մակերեւույթից 2030 մետր բարձրության վրա, Սեւանա լճից 2 կիլոմետր դեպի հարավ, Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային փեշին, Վաղաշեն եւ Զոլաքար գյուղերի մեջտեղում:

Հուշարձանների պահպանության պետական ցանկում Աստղաձորից հաշվառված են Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակով թվագրվող 1 բերդ-ամրոց ու 1 դամբարանադաշտ, միջին դարերով թվագրվող 3 եկեղեցի, 1 մատուռ, 2 ձիթհան, պատմական 5 գերեզմանոց, 103 խաչքար- տապանաքար:

Գյուղն Աստղաձոր է վերանվանվել ԽՍՀՄ տարիներին՝ 1935 թվականին: Իսկ մինչ այդ եղած Ալիղըռըխ օտարահունչ, եղծված անվանումը կապված է այլադավան քոչվոր ցեղերի ձեռնարկած ավերիչ ասպատակությունների, բռնագաղթումների ու հայ բնակչության հանդեպ գործած ոճիրների ու տեղահանության հետ: Այդ անվան բացատրությունն էլ հենց այսպես է ստուգաբանվում՝ Ալիի ամայացրած վայր:

Ականավոր հայագետներ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն ու Երվանդ Լալայանն իրենց աշխատություններում այս բնակավայրի հին անունը նույնպես նշում են Խաչիձոր կամ Խաչաձոր տարբերակով՝ նկատի ունենալով նաեւ խաչքարերի առատությունն ու ոճական բազմազանությունը, սակայն ականավոր մյուս հայագետ Սեդրակ Բարխուդարյանն իր «Դիվան հայ վիմագրության» աշխատության մեջ Աստղաձորի հին անունը նշում է Կածիք կամ Կածիք-Կած տարբերակով:

Գյուղը հայաթափվել է 17-18-րդ դարերի ընթացքում, պարսից Շահ Աբասի կազմակերպած մեծ բռնագաղթի, այնուհետ՝ լեզգիների ձեռնարկած չորս ավերիչ արշավանքների արդյունքում:

Մերօրյա Աստղաձորը վերահայացել է 1830 թվականին, երբ Հայաստանի ներկայիս տարածքը մտել է Ռուսական կայսրության կազմի մեջ, որի արդյունքում էլ Արեւմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Կումլիպուճախ գյուղից 38 հայ ընտանիք վերաբնակություն են հաստատում Սեւանա լճի հարավային ափին:

Աստղաձորի ամենահայտնի պատմական հին հուշարձանը համարվում է «Վանքի բերդ» հնավայրը, որը գտնվում է գյուղից 3 կիլոմետր դեպի հարավ, Վարդենիսի լեռնաշղթայի փեշին, Ակնախաչ լեռան գագաթին բազմած «Սարի Սուրբ» նշանավոր եկեղեցի տանող ճանապարհին: Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակով թվագրվող այս ամրոցի մասին ոչ մի հիշատակություն չկա Գեղեոն Միքայելյանի «Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները» աշխատության մեջ: Սակայն «Վանքի բերդի» ուսումնասիրությունը եւ չափագրումը տեղի է ունեցել ավելի ուշ, 2021 թվականին, ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի» կողմից, որով եւ հաստատվել է ամրոցի տարածքի , նրա հետ առնչվող բնակատեղիի ու դամբարանադաշտի պահպանության գոտին:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԾՈՎԻՆԱՐՈՎ ԱՆՑՆՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ 2,4 ԿԻԼՈՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՏՎԱԾԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին եւ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ 2026 թվականի հունիսի 24-ից մեկնարկել եւ ընթանում են /Մ-10/-Ծովինար-/Մ-10/ 2,4 կիլոմետր երկարության մարզային նշանակության ճանապարհի միջին նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 116 միլիոն 400 հազար դրամ:

Ծրագրով նախատեսվում է ճանապարհի գոյություն ունեցող ծածկի փոսային նորոգում, առանձին հատվածներում՝ հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտբետոնյա վերին ծածկի տեղադրում 13 հազար 783 քառակուսի մետր մակերեսով: Ավազակոպճային շերտ կտեղադրվի նաեւ կողնակներում: Ծրագրի ավարտին կտեղադրվեն ճանապարհային 28 նշաններ, կիրականացվի գծանշում:

Շինարարական աշխատանքները կավարտվեն հուլիս ամսի ընթացքում:

Ծովինարով անցնող մարզային նշանակության ճանապարհի շինհրապարակ են այցելել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը եւ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

ԵՐԱՆՈՍՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է 2 ՓՈՂՈՑ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղում ՀՀ Կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են 1-ին եւ 4-րդ փողոցների հիմնանորոգման աշխատանքները:

Երանոսի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 145 միլիոն 589 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Երանոսի թիվ 1 եւ 4 փողոցների ասֆալտապատում՝ 2 կիլոմետր երկարությամբ եւ շուրջ 12 հազար քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հունիսի 15-ից եւ հունիսի 29-ի դրությամբ իրականացվել շուրջ 60 տոկոսով:

Հիմնանորոգման ծրագիրն իրականացնում է «ՎՄՎ ՔՈՄՓՆԻ» ընկերությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում Երանոսի թիվ 1 եւ 4 փողոցների բնակիչներն առաջին անգամ ասֆալտապատ ու բարեկարգ ճանապարհից օգտվելու հնարավորություն կունենան:

Շինարարական աշխատանքները կավարտվեն այս տարվա հուլիս ամսի ընթացքում:

ԳԵՂՀՈՎԻՏՈՒՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է 3 ՓՈՂՈՑ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում թիվ 2,3 փողոցների եւ 5-րդ փողոցի 7-րդ նրբանցքի հիմնանորոգման աշխատանքները:

Գեղհովիտի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 68 միլիոն 929 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Գեղհովիտի փողոցների ասֆալտապատում՝ 967 գծամետր երկարությամբ եւ շուրջ 4 հազար քառակուսի մետր մակերեսով: Որոշ տեղերում տեղադրվել են ոռոգման եւ ջրահեռացման երկաթբետոնյա առուներ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվական մայիսի սկզբից եւ հունիսի 27-ի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ընկերությունը:

Ծրագրի իրականացման արդյունքում Գեղհովիտի թիվ 2,3 փողոցների եւ 5-րդ փողոցի 7-րդ նրբանցքի բնակիչներն առաջին անգամ ասֆալտապատ ու բարեկարգ ճանապարհներից օգտվելու հնարավորություն կունենան:

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում ՀՀ Կառավարության 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում Բաբաջանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Բաբաջանյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 72 միլիոն 831 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Բաբաջանյան փողոցի հիմնանորոգում՝ 440 գծամետր երկարությամբ՝ ճանապարհի երթեւեկելի մասի եւ երկկողման մայթերի ասֆալտապատմամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի մայիսից:

Բաբաջանյան փողոցը կներկայանա նորովի՝ ապահովելով առավել անվտանգ երթեւեկություն եւ տարածքի բարեկարգ տեսք, որը կամբողջանա Կոմիտաս, Խաղաղություն փողոցների ասֆալտապատմամբ:

Արմինե Ղուկասյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ 9 ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐ ԵՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բազմաբնակարան 9 շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների մեկնարկը տրված է ավելի քան երկու շաբաթ առաջ:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, վերանորոգվում են Մարտունի քաղաքի Գ. Նժդեհ 9, Թումանյան 5 եւ 7, Զիրոյան 31 եւ 25, Զ. Անդրանիկի 7, ինչպես նաեւ Վարդենիկ բնակավայրի Բանավան 7, 2 եւ 5 հասցեներում գտնվող բազմաբնակարան շենքերի տանիքները: Ծրագրի իրականացման պայմանագրային արժեքը կազմում է 191 միլիոն 242 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է տեղական բյուջեի միջոցներից: Ծրագրով նախատեսված է հին փայտյա կավարամածի եւ ազբեստյա շիֆերի ծածկի փոխարինում նոր կավարամածով ու ցինկապատ թիթեղյա ծածկով:

Վերանորոգվող շենքերի տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 4050 քառակուսի մետր: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել այս տարվա ընթացքում:

-Այս ծրագիրը կենսական ու կարեւոր նշանակություն ուներ Մարտունի քաղաքի ու Վարդենիկ գյուղի՝ թվով 9 բազմաբնակարան շենքերի բնակիչների համար, ովքեր տասնամյակներ շարունակ սպասել են քայքայված տանիքների վերանորոգման խնդրի լուծմանը: Ծրագրի շահառու են հանդիսանում հարյուրավոր ընտանիքներ,- ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

ԳԵՂԱՐԲՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ

Ավանդույթի համաձայն՝ Սեւանի վետերան ոստիկանների միության կողմից նորակոչիկներին հանձնվել են ժամացույցներ:

Տեր Ստեփանոս քահանա Իգնաթեւոսյանն էլ նորակոչիկներին հանձնել է աղոթագիրք:

Օրվա առթիվ ուղերձ է հղել Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը:

Գավառի համայնքապետարանի աշխատակազմի տեղեկացմամբ՝ Գավառ քաղաքի զինկոմիսարիատի շենքի դիմաց տեղի է ունեցել հանդիսավոր արարողություն, որի ընթացքում համայնքի նորակոչիկները ճանապարհվել են պարտադիր զինվորական ծառայության:

Արարողությանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Զանիկ Բազեյանը, ՀՀ ՊՆ ՀԶԿ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար Արմեն Մնացականյանը, Գավառի տարածքային զինվորական կոմիսար Վանիկ Գոգեյանը, Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Սեւակ Խլղաթյանը, Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Բոշյանը, ինչպես նաեւ զինվորական կոմիսարիատի եւ Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի ներկայացուցիչներ:

Նրանք շնորհավորել են նորակոչիկներին, մաղթել խաղաղ ու անվտանգ ծառայություն: Երգի եւ երաժշտության ուղեկցությամբ նորակոչիկները բարձր տրամադրությամբ ճանապարհվել են ծառայության:

Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի տեղեկացմամբ՝ Ճամբարակի զինկոմիսարիատից հանդիսավորությամբ Հայոց բանակ են ճանապարհվել համայնքի նորակոչիկները, ովքեր ստացել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցչի, Ճամբարակի համայնքապետարանի ղեկավար կազմի, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի բարեմաղթանքներն ու օրհնությունը:

Ամառային զորակոչը Գեղարքունիքի մարզում կշարունակվի մինչեւ 2026 թվականի օգոստոսի 15-ը:

15.qxd 18/07/2026 20:00 Page 3



/սկիզբը՝ էջ 1-ում/

«Վանքի բերդ» անվանումն ամրոցին տրվել է այն պատճառով, որ նրա տարածքում պահպանվել է միջնադարյան շքեղ կառույց հանդիսացող վանքի հյուսիսային պատի մի հատված: Իսկ որ նույնն է՝ վանքը կառուցվել է նույն ամրոցի տարածքի հյուսիսակողմում:

Ամրոցն արեւմտյան ու հյուսիսային կողմերում բարձրանում է խորունկ ձորերի վրա: Այն ծովի մակերեւույթից գտնվում է 2170 մետր բարձրության վրա:

Դժվար է ասել, այս վանքն արդյո՞ք բարձրացել է հին պաշտամունքային կառույցի վրա, թե հիմքից կառուցվել է միայն 9-10-րդ դարերում, սակայն հնագիտական հետազոտություններով մի բան հաստատ է, որ «Վանքի բերդ» ամրոցը, նրա հետ առնչվող բնակավայրը գործել են շատ վաղուց՝ Քրիստոսից առաջ 2-1 հազարամյակից: Այդ մասին են փաստում ինչպես պահպանված պարիսպների ու հին տների ավերակները, այնպես էլ՝ նույն ժամանակաշրջանով թվագրվող դամբարանները:

Վանքի ավերակ, բայց կիսականգուն տեսքը պարզորոշ հուշում է, թե իր ժամանակին ինչ շքեղ կառույց է այստեղ կանգնած եղել, ինչ նշանավոր դեր է կատարել տեղի հայ բնակչության հոգեւոր-մշակութային կյանքում: Այն շինված է եղել սրբատաշ քարերով ու շատ կարծր կրաշաղախով, գրեթե շինարարական նույն տեխիկայով ու կառուցվածքային ոճով, ինչը յուրահատուկ էր Գեղարքունիք գավառում 9-10-րդ դարերում կառուցված վանքերին կամ եկեղեցիներին: «Եկեղեցին փոքր է, սրբատաշ քարերով շինված, ներքուստ եւ արտաքուստ խաչաձեւ հատակագծով, խաչաթեւերը դրսից ուղղանկյուն են: Երեսպատման քարերի մեծությունը եւ այլ մանրամասներ հուշում են, որ այն 9-10-րդ դարերի շինվածք է: Թափված քարերի մեջ գտանք մի բեկոր՝ վրան 3 տող արձանագրություն, հին տառաձեւերով, բայց սկզբի կարեւոր մասը չվերծանվող՝ «..Արարի...Յաղոթս Յիշեցէք»,-գրում է Սեդրակ Բարխուդարյանը:

Դժվար է որոշել նաեւ, թե մինչեւ երբ է գործել վանքն ու շրջակա բնակավայրը, երբ է լքվել ու հիմնահատակ կործանվել, սակայն՝ դժվար չէ եզրակացնել, որ այդ շքեղ կառուցից տեղում մի չնչին մասն է մնացել, իսկ մնացած սրբատաշ քարերը, որոնց մեջ հաստատ եղած կլինեն արձանագիր ու քանդակված քարեր, տեղափոխվել են այլ վայր՝ օգտագործվելով այլ շինարարությունների մեջ: Տարեց աստղաձորցիների պատմելով՝ այստեղից 19-20-րդ դարի ընթացքում բերված քարերն օգտագործվել են առանձնատների շինարարության մեջ, նաեւ չի էլ բացառվում, որ Պողոս-Պետրոս եկեղեցու վերանորոգման համար, որի պատերի մեջ, խորաններում, մուտքի բարավորին տեղադրված են տարբեր դարաշրջաններում կերտված բազմաթիվ ու բազմապիսի գեղաքանդակ խաչքարեր:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը մի կարեւոր տեղեկություն է հաղորդում Աստղաձորում գտնված նկարազարդ աղյուսի մասին, ինչն արդեն այս գյուղի պատմությունը կապում է նաեւ Ուրարտական դարաշրջանի մշակույթի հետ: «Այս Ալիղռան գյուղի մոտ երեւում են կարծես արհեստական բլուրներ, որոց միջից դուրս են գալի հին թրծյալ աղյուսներ՝ զարդարված զանազան նկարներով, գուցե եւ բեւեռագրովք, պետք է պեղել: Այսպես եւ Մաքենյաց վանքի մոտ կան նկարազարդ աղյուսներ: Հիշյալ աղյուսի մի կտորը Նոր Պայազիտից բերեցի էջմիածին եւ սեղանիս վերա դրված է, իսկ ամբողջը գտնելու համար հանձնեցի գործակալ Կյուրեղ վարդապետին՝ գտնել եւ ուղարկել ինձ. այնտեղ գնալս չհաջողելո պատճառավ: Կտոր աղյուսի վերա մի ամեհի ձի է նկարված, եւ շրջապատը միօրինակ սրտանման զարդեր»,-գրում է Սմբատյանցը՝ գրքում տեղադրելով նկարազարդ աղյուսի լուսանկարը:

Դժվար է հիմա կողմնորոշվել նաեւ, թե կոնկրետ որտեղ են գտնվում Սմբատյանցի նշած արհեստական բլուրները, որտեղից գտնվել են այդ աղյուսները, քանի որ անցած մեկուկես դարերի ընթացքում՝ նրա այցից մինչ օրս, Աստղաձորն ընդարձակվել ու տարածվել է ահռելի չափերով, հնագիտական շատ արժեքների հետքերը կորել են: Սակայն, ամեն դեպքում, մեր հնագիտական միտքը պետք է աշխատի այս ուղղությամբ ու փորձի գնալ Սմբատյանցի նշած հետքերով, որտեղ կարող է հանկարծ դարերի անհայտությունից դուրս կորզել մեր ժողովրդի պատմության համար մի խոշոր ու թաքնված գաղտնիք:

Աստղաձորի պատմության հնագույն դարաշրջանների բացահայտման առումով երկու կարեւոր տեղեկություն է հաղորդում Սեդրակ Բարխուդարյանը: Առաջին դեպքում նա հավաստում է, որ Սուրբ Հռիփսիմե Մատուռի մուտքի մոտից անձամբ գտել ու Հայաստանի պատմության պետական թանգարան է տեղափոխել խաչքարի վերածված Արտաշիսյան սահմանասյունը, որով Հայոց Արքա Արտաշես Առաջինի կողմից օրենքով ամրագրված են հողային հարաբերությունները եւ ճշտված են բնակավայրերի սահմանները: Ասել է, թե Աստղաձորը Քրիստոսից առաջ 2-րդ դարում ընդգրկված է եղել Մեծ Հայքի թագավորության կազմում: «Գյուղի հնագույն բնակավայր լինելը, բացի այլ, արձանագրություն չունեցող հուշարձաններից, հաստատում է նաեւ հարավ-արեւմուտքում, բարձր բլրի վրա գտնվող, ավերակ Ս. Հռիփսիմե մատուռի մեջ, բեմի ճակատի շինության համար օգտագործած Արտաշես Թագավորի սահմանաքարի մի բեկորը՝ արամեերեն արձանագրությամբ, որը գտանք 1957 թվականի գիտարշավի ընթացքում»,-գրում է Սեդրակ Բարխուդարյանը:

Այստեղ հարկ է անել մի ուղղում. Սուրբ Հռիփսիմե մատուռը, որտեղից գտնվել է Արտաշիսյան սահմանասյունը, գտնվում է Վաղաշենի, այլ ոչ թե Աստղաձորի վարչական տարածքում: Դժվար է հասկանալ, թե ինչու է Բարխուդարյանն այն տեղադրել Աստղաձորի վիմագիր հուշարձանների ցանկում, սակայն, այդ անճշտությամբ հանդերձ, կարելի է եւ դա համարել պատմական ու իրական փաստ, քանի որ Վաղաշեի Սուրբ Հռիփսիմե մատուռը Աստղաձորին հսկում է արեւմուտքի բարձունքից, ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորությամբ:

Երկրորդ դեպքում հնագետը փաստում է մի հին, ավեր շինության՝ ձիթհանի մասին, որն ունի կիկլոպյան շարվածք. «...Հուշարձանների այս խմբի դիմաց, գետակի ձախ ափին գտնվում են մի շատ մեծ ձիթհանի ավերակներ, շինված կիկլոպյան քարերով, իսկ գլխի բարձրության վրա երկու հին գերեզմանատներ են, որտեղ կան շատ հին, բայց անարձանագիր խաչքարեր»,-վկայում է Բարխուդարյանը:

Կիկլոպյան շարվածքով այդ ձիթհանը գտնվում է Գվիդոն Սարոյանի տնամերձում, Աստղաձորի Սուրբ Հռիփսիմե մատուռի դիմաց, ձորով հոսող գետակի ձախ ափին: Բացի հյուսիսակողմը, մնացած բոլոր կողմերից պահպանված են շինության պատերը, որոնք բարձրանում են մինչեւ 4 մետր ու շարված են առանց շաղախի օգտագործման, բավականին խոշոր, «Սասուն» քարերով: Դժվար է ասել, թե այդ ձիթհանը որ դարաշրջանում է ստույգ կառուցված, բայց եւ կարելի է ենթադրել, որ գուցե թե հենց կիկլոպյան դարաշրջանից էլ գալիս է նրա պատմությունը:

Ու հենց նույն ձիթհանի հարավարեւմտյան կողմում, սարավանդի վրա բարձրանում է խաչքար-տապանաքարերի ընդարձակ դաշտը, որն առավելապես քողարկված է բարձր լեռնազանգվածով ու որոշակիորեն փակ տեսադաշտով: Բարդ է նաեւ պարզել, թե քանի խաչքար-տապանաքարի հետ գործ ունենք այստեղ, քանի որ շատ կոթողներ մասամբ կամ հիմնովին թաղված են հողի շերտի տակ: Երեւացող մի քանի տասնյակ հուշարձանները, որոնք անարձանագիր են, համարվում են արվեստի բացառիկ նմուշներ՝ կերտված 9-10-րդ դարերում:

Գերեզմանոցի արեւելյան եզրին, ձորի վերին պռունկով մեկ ձգվում է խոշոր քարերով շարված պարիսպ՝ շուրջ 1-1,5 մետր լայնությամբ, ինչը հուշում է այս վայրում ամրոց-բնակատեղիի գոյության մասին:

Խաչքարերը, արձանագիր կամ անարձանագիր, սփռված են Աստղաձորով մեկ՝ մեկը մյուսից գեղեցիկ, անկրկնելի, խորհրդավոր ու պատկերավոր: Դրանք հայի հոգուն զորավոր ուժ տվող զենքեր են, ավերող թաթերի դեմ միշտ կանգուն ու խոսուն, անխորտակ բանակներ, հայկականության անխոս վկաներ:

Խաչքարերի նման առատությունն ու գեղեցկությունը ժամանակին կախարդել է նաեւ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցին, ով չի կարողացել թաքցնել իր հիացմունքը, երբ առաջին անգամ ոտք է դրել Աստղաձոր-Խաչիձոր:

«Ալիղրրը գյուղի արեւմտյան կողմի ձորակի մեջ՝ հին ձիթեհանքի դիմացն՝ քարաժայռերի վերա շատ խաչանշաններ կային նկարված հին ժամանակից, որոց միայն պատվանդանի ներքեւ տեսինք մի քանի տող գրված, որն մաքրելով՝ ձորի ջրո խոնավությունից պատճառած մամուռներն՝ կարդացինք հետագա բանը. «Հանուն Աստուծո ես Տիրոս կանգնեցի զԽաչս հի շատակ հոգվո իմո, ճ. տարի ապրեցա զինավոր, ով կարդեք, աղավքս հիշեցեք, թվ. ՉԻ (1271): Մենք եւս շատերի նման «Աստված ողորմի հոգվույն» ասելով, եւ դեռ մի «Հոգվոցն հան գուցելոց» եւս ավելացնելով՝ վերադարձանք գյուղը, զանազան խորհրդածություններ անելով այն պիսի հավատո, հուսո եւ սիրո վերա, որ մեր սուրբ նախնյացն ստիպել էր Քրիստոսի խաչի դրոշակը ամենայն տեղ կանգնեցնել, նրանց սրտերի վերա անջինջ տպավորությամբ գրելով Առաքելական գեղեցիկ խոսքերը. «Այլ ինձ քա՛վ լիցի պարծիլ, բայց միայն ի խաչ Տեառն մերո Հի սուսի Քրիստոսի»... Այսպես ամենայն բլրո վերա, ամենայն ձորակի մեջ, ամենայն ճանապարհի վերա, ամենայն գյուղօրեից մեջ եւ շրջապատն կանգուն եւ գետին խոնարհած՝ լիքն էին խաչքարինք եւ խաչանշանք, որք հայտնի վկայում են, թե մեր նախնիքն որպիսի՞ սիրով վառված էին քրիստոնեության մեջ եւ որպիսի՞ հավատով եւ հուսով Աստվածպաշտության մեջ: Այսպես հարուստ է խաչքարերով եւ վանքերով եւ մատուռներով նաեւ Նախիջեւանա ամբողջ գավառն՝ որ բաղկանա Վայոց ձորից, Ճահուկից, Երնջակից, եւ Գողթան գավառից. ինչպես քանիցս գրել եմ: Գյուղի արեւմտյան կողմում կան ավերակ գյուղատեղ եւ մի վանք սուրբ Հռիփսիմեի անունով. որը շինված է կոփածո քարով, թեեւ այժմ քայքայված. վանքս շրջապատած է պարսպով: Տիրոս զինվորի խաչքարի մոտ նույն ձորում կա մի մեծադիր խաչքար առանց գրվածոց՝ տեղացիներից «Զորավոր Խաչ» անվանյալ, որը գտնվել է մի ձիթահանքի տեղում, որին ուխտ են գնում շրջակա գյուղերի ժողովուրդը, սուրբ Խաչի տոներին. այն է՝ Երեւման Խաչ, Վերացման Խաչ, Վարագա Խաչ եւ Գյուտ Խաչ»,-գրում է Սմբատյանցը «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի» գրքում:

Նույն «Զորավոր խաչին» անդրադառնում է նաեւ Երվանդ Լալայանը, հավելելով, որ սրան ավելի շատ ուխտ են գնում չբեր կանայք: «Սա մի գեղեցիկ խաչքար է, որ վերջին ժամանակներս քահանայի կարգադրությամբ բերել, կանգնեցրել են կռապաշտական ժամանակներից մնացած մի ժայռի գագաթին, որի մեջը փորված է եւ երկու կողմից անցք բաց արած: Ամուլ կանայք երեխա ունենալու տենչով ուխտ են գալիս այս ժայռին եւ երեք անգամ անցնում այդ ծակի միջով»,-գրում է Լալայանը:

Ընդ որում, Լալայանը, 1910-ական թվականներին այցելելով գյուղ, արձանագրել է , որ Աստղաձորն այդ ժամանակ ունեցել է 174 տնտեսություն՝ 1581 հոգով՝ 845 արական, 736 իգական սեռի բնակչությամբ:

Աստղաձորի պատմության եւ մշակույթի հուշարձանների շարքում իրենց բացառիկ տեղն ունեն Սուրբ Պողոս-Պետրոս եւ Սուրբ Հռիփսիմե եկեղեցիները:

Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցին գտնվում է գյուղի հարավային մասում, Սուրբ Հռիփսիմեից մի քանի հարյուր մետր դեպի արեւելք: Հուշարձանների պահպանության պետական ցանկում այն գրանցված է որպես 19-րդ դարի հուշարձան, սակայն թե՛ կիսավեր պատերում շարված, թե՛ եկեղեցու բակով մեկ սփռված պատմամշակութային հուշարձանները՝ գեղաքանդակ, պատկերազարդ խաչքար-տապանաքարերը գրեթե աղերս չունեն նշյալ ժամանակահատվածի հետ, քանի որ դրանք կերտվել են 9-18-րդ դարերի ընթացքում: Այս եկեղեցու պատմությունը 19-րդ դարին աղերսվում է միայն այնքանով, որքանով որ այն վերանորոգել ու գործող են դարձրել Ալաշկերտից գաղթած ու այստեղ հաստատված հայ ընտանիքները 1860-70-ական թվականներին, ինչ մասին հիշատակում է նաեւ Մեսրոպ Սմբատյանցը: Իսկ Երվանդ Լալայանը վարանորոգված այդ եկեղեցին արդեն 1910 թվականին բնութագրել է որպես «միակ հասարակ եկեղեցի», որի սեղանի աջ կողմում մի խաչքարի վրա արձանագրված է. «Ի ժամանակս Շմաւոն արքեպիսկոպոսի սիւնեաց ես Նէրսես քահանայս կանկնեցի զխաչս հաւր իմոյ Ստեփաննոս քահանայի. թվ. ՉԿԱ /1512/»:

«Նույն եկեղեցու պատի մեջ դրված է նաեւ մի ուրիշ գերեզմանաքար, որի վրա քանդակված է մի ձի, մոտը՝ մի մարդ, ձեռին՝ մի գավ, մի քիչ վերեւ՝ կլոր հացեր:Փոքր-ինչ հեռու ՝ մի ուրիշ մարդ, մոտը մի մահակ, եւ ոչխար խուզելու մի մկրատ: Այս նկարի ներքեւում արձանագրված է. «Այս է հանգիստ Տրունին, որդի Գալուստ քահանային»,-վկայում է Լալայանը:

Այս եկեղեցին գործել է մինչեւ 1930-ական թվականները, որից հետո ԽՍՀՄ անաստվածության տարիներին վերածվել է կոլխոզի հացահատիկի պահեստի, ապա հինովին լքվել ու մեզ է հասել կիսակործան վիճակում: Կարծում ենք, որ նրա վերականգնումը կամ նորոգումը պետք է լինի Մարտունի համայնքի ծրագրային առաջնահերթությունների շարքում:

Սուրբ Հռիփսիմե եկեղեցին գտնվում է ձորի մեջ, գյուղի արեւմտյան կողմում, Աստղաձոր գետակի աջ ափին՝ արեւելյան կողմից շրջապատված ուղղահայաց ժայռաշղթայով: Այն ավելի շատ այսօրվա իր գրված չափերով նման է մատուռի, որը, սակայն, սրբավայր է հանդիսացել անհիշելի ժամանակներից: Կարելի է նաեւ եզրակացնել, որ այն բարձրացել է ավելի հին պաշտամունքային շինության հիմքի վրա, որի հատակին, ինչպես մեր բոլոր մատուռների պարագայում է, հնագույն դամբարանի հետքեր են նկատվում:

/շարունակությունը՝ էջ 6-ում/

15.qxd 18/07/2026 20:00 Page 4

ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ՎՐՋՆԻ ՏԻՐԱԿԱԼԸ

Փարավոն Միրզոյան. անուն, որ վաղուց իր ուրույն տեղն ու դերն ունի հայ մշակութային արժեհամակարգում ու միջազգային հարթակում:

ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանի յուրաքանչյուր ստեղծագործություն արվեստի յուրօրինակ ու մնայուն գործ է: Ինտելեկտուալ արվեստագետ, որի վրձնահարվածից ծնվում է կյանք ու սեր: Տիեզերքը բարեհաճ է գտնվել նրա հանդեպ եւ շռայլորեն շնորհել է տաղանդ: Աշխատասիրության, ձգտման ու ակադեմիական փայլուն կրթության շնորհիվ այն հասել է կատարելության:

Վարպետի արվեստում չկա կրկնօրինակում, նա հարթել է իր ուղին՝ ձեւավորելով ուրույն ձեռագիր, ոճ, գեղագիտական ճաշակ, համարձակ ներկայանալի ես:

Հայաստանի ամենագեղեցիկ վայրերից մեկում՝ Սյունյաց աշխարհում ծնունդ առած արվեստագետի ոգեշնչման աղբյուրը հենց հայրենիքն է: Այն առավել արտացոլված է կտավներում, որոնք շնչում են հայրենի հողի, ջրի, արեւի, լեռների, ծառ ու ծաղկի համահունչ սինթեզով: Յուրաքանչյուր կտավում ներդաշնակ, հարմոնիկ լուծումներով է միահյուսված պոեզիան, երաժշտությունը եւ գեղանկարչությունը: Միրզոյանի գունապնակը վառ է, ուրախ, նա ստեղծագործում է մաժորային տոնայնության մեջ: Անգամ իր հոգու ու ժողովրդի ցավը, վիշտը, կարոտը հանգուցալուծում է մտավորականին վայել ճշգրիտ ուղով՝ դեպի լույսը, արեւն ու կյանքը:

Խիստ ու խրոխտ այս արվեստագետի հոգին իրականում շատ նուրբ ու փխրուն է. այդ են վկայում այն բազմաթիվ կտավները, որոնք զարդարում ու լուսավորում են Հայաստանի ու տարբեր երկրների շատ թանգարաններ: Չափազանց նուրբ, զգայական գիծ կա նրա մեջ, որ հասնում է երկնային սահմանագծին: Նա կարողանում է առանց ավելորդ ջանք գործադրելու հմտորեն որսալ ակնթարթը եւ հավերժացնել:

Որպես բարձր մտավորական՝ կերտել ու կերտում է գործեր, որ մեր ժողովրդի մշակութային ժառանգության հաստատուն մաս են կազմում: Փարավոն Միրզոյանի արվեստը արդի է ու համամարդկային: Ունենալով անսահմանափակ ստեղծագործական մտահորիզոն, նա կոտրել է բոլոր կարծրատիպերը՝ հատելով անսահմանության շեմը, չդավաճանելով իր ես-ը, դավանած հոգեւոր- բարոյական արժեքները եւ ազգային դիմագիծը:

Նրա արվեստը բազմաժանր է. այն ընդգրկում է ռապսոդիաներ, ռեքվիեմներ, էտյուդներ մինչեւ անգամ «Թռչնի համբույր» պրելյուդ՝ ի դեմս բնապատկերների, նատյուրմորտների, դիմանկարների, գծանկարների: Երաժշտափիլիսոփայական ելեւէջները վառ արտահայտված են նկարչի արվեստում: Յուրաքանչյուր ոք դիտելով նրա կտավները՝ կտեսնի, կլսի այն հոգեհմա երաժշտությունը, որն այդ պահին համահունչ է իր սրտի զարկին ու կյանքի ռիթմին: Նա գտել է մարդկային գենետիկ կոդի առեղծվածը եւ կարողացել վրձնահարվածով հավերժացնել ու աշխարհին ներկայացնել բարձրագույն սիրո դրսեւորումները, թողնելով այն լույսն ու ստվերը, որ առկայծում է սատանայական կրքից մինչեւ կապույտ անուրջներ:

Ներթափանցելով նկարչի մոգական աշխարհ, թվում է, բացահայտում ես անտեսանելին, անիրականը, սակայն հեղինակն ունի գաղտնիք, որը հասու չէ սովորական մահկանացուներին: Փարավոնն է թելադրում տեմպն ու ռիթմը իր առեղծվածային կտավի, որի բանալին միայն ինքն ունի: Ճշգրիտ, հարմոնիկ լուծումներով գունային խաղը նրա ստեղծագործություններում հնչում է իբրեւ կատարյալ տաղ, որտեղ անգամ դադարն ունի իր մեղեդին:

Օժտված արվեստագետի կյանքում գերիշխում է սերը, որն էլ իր շնորհին միաձուլվելով՝ ստեղծում է գլուխգործոցներ:

2026 թվականի ամանորյա հեքիաթը հրեղեն ձիու կերպարն է, որ պատկերել է Վարպետը, կարծես երազից ծնված մի տեսիլք: Կապույտը, որպես խաղաղության ու վեհության խորհրդանիշ, ճերմակը՝ անբերեւույթ հրաշքի ծնունդ: Հստակ պատկերված է փերու բերած ավետիսը եւ մոգական այլակների խաղը՝ որպես հաղորդություն մարդկությանը:

Եվ այն հնչում է Սուրբ ծննդյան գիշերը՝ իբրեւ «Տաղ Աստվածածնա» ...

Գարնանամուտին գույների մաեստրոյի սիրառատ ու երփներանգ ներաշխարհից ծնունդ է առել մեկ այլ գլուխգործոց: Նա կտավին է անմահացրել «Եդեմական պարտեզ՝ նրբագեղ հայուհու ծաղկունքով»: Այստեղ նկարագրված է կյանք, սեր ու կին, որտեղ իշխում է կանացի նրբությունը, քնքշությունը, վեհությունը: Ծաղկած պարտեզը կնոջ բույրն ունի՝ վարդագույն կյանքի խորհրդով: Ըստ Փ. Միրզոյանի վրձնի՝ կտավը շնչում է Սայաթ Նովայի քնարական սիրերգությամբ, իրական ու երեւակայական աշխարհում:

Յուրաքանչյուր գաղափար, որն արդեն կտավ է դառնում, ունի իր ասելիքը, տրամադրությունը, զգացմունքը եւ, իհարկե, տիեզերքից եկող ուժը, որը հենց հիմքն է ճշմարիտ արվեստի ու արվեստագետի առաքելության:

...Ապրիլի 24, խորհրդանշական երեք մեկ՝ 111 տարի . Փարավոն Միրզոյան մտավորականը, արվեստագետը, ՀՀ ժողովրդական նկարիչը եւ հայ ազգի նվիրյալ զավակը, հայրենիքում ապրող եւ արարող անձը՝ իր մտորումներով, հայրենիքի սպիացած, բայց չմոռացվող վերքերի ցավերով տարված, այդ օրը երեկոյան իրենից անկախ, վերին ուժերի մղումով՝ կյանքի է կոչում եւս մի գլուխգործոց՝ «Վերածնունդ»: Հայ քրիստոնյա ազգի դարավոր պատմությունն է այս կտավում, որը վերածնվելով բազմիցս՝ ապրելով ապրեցնում է՝ հնչելով մաժորային տոնայնությամբ :

Բելառուսիայի հանրապետության ազգային արվեստի թանգարանի գլխավոր տնօրեն, արվեստի վաստակավոր գործիչ Վլադիմիր Պրոկոպցովը նկարչի տեղի անհատական ցուցահանդեսից տպավորված, որակել է նրան հայ ազգի խիստ հազվագյուտ նկարիչ. « Փարավոն Միրզոյանի արվեստը բաց պատուհան է դեպի տիեզերք, որտեղ Վարպետի վառ աստղը շլացնում է իր տաղանդի լույսով ու առեղծվածով»:

Լեհ արվեստաբան Բոգուսլավ Դեպտուլան Լեհաստանում, Սոպոտի պետական արվեստի պատկերասրահում կայացած Վարպետի անհատական ցուցահանդեսից ոգեշնչված, ասել է. «Հանգստություն, գեղեցկություն, կենդանի գույներ, ահա սա է հաճույքի նկարչի՝ Փարավոն Միրզոյանի արվեստը»:

Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանի տնօրեն, արվեստի վաստակավոր գործիչ Վլադիմիր Գուսեւը, ով գույների մաեստրոյին գիտի դեռ ուսանողական տարիներից, փաստել է, որ ոչ բարձր կոչումներն ու տիտղոսները, ոչ վաստակած համբավն ու փառքը երկրի սահմաններից դուրս չեն խանգարել նրան մնալ այդպիսին, ինչպիսին կար ի սկզբանե, ինչով օժտված էր բնությունից, այն է՝ հրաշալի ՀԱՅ նկարիչ:

Արվեստագիտության թեկնածու Եկատերինա Իզուֆատովան նկատել է, որ նկարիչը ընկալում է աշխարհը ոչ միայն որպես վառ ու տոնական մի պատկեր, այլ նաեւ որպես զգացմունքների ու տրամադրությունների դրամա: Մեզ մնում է միայն զգալ այն, կռահել էներգիայի ուղղվածությունը, քողարկված կյանքը՝ արտահայտված Փարավոն Միրզոյանի անաղարտ պլաստիկության հմայքով:

Կարեն Միքայելյան արվեստաբանի կարծիքով՝ Փարավոն Միրզոյանի հոգեւոր եւ գեղարվեստական խորը, անդուլ որոնումների կենդանի ուժը նրան թույլ է տալիս նշանակալի տեղ զբաղեցնել վերջին շրջանի հայ արվեստի համատեքստում: Նա գտել է իր երկրի սեփական տեսանկյունը, երկրի ուրույն զգացողությունը, եւ դա է ամենակարեւորը:

Ըստ ՀՀ վաստակավոր ժուռնալիստ, արձակագիր Տիգրան Նիկողոսյանի՝ ինքնատիպ այս նկարչի վրձնի ուժը ծննդավայրից է, ուր իր հայրենակից Համո Սահյանի բնորոշմամբ՝ ամպը ամպից է կախվում ու սարն հենվում է սարի ուսին, ուր թվացյալ միատոն գույներին մեկ էլ գալիս խառնվում են ուշացած գարնան կամ կարճատեւ ամռան մի օր լեռներում շքեղորեն ծաղկող ալպիական մարգագետիններում բացված ծաղկագորգերի գույները: Միրզոյանի կտավներում տեսնելով գույների վարպետ համադրությունները, զարմանալ կարելի է, թե ինչպես է սովորականի մեջ տեսել անսովորը, եւ հենց այստեղ է նկարչի հաղթանակը:

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանաստեղծ Հովիկ Հովեյանը նկատել է.« Փարավոնի գեղանկարչությունն իրականության գունապատկերային հապավումն է: Բոլոր երանգները սկսվում են մեծատառ առոգանությամբ եւ հասնում տրանսցենդենտալի եզրագծի»:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտագետ Դանիել Երաժշտի խոսքով՝ Փ. Միրզոյանի արվեստում կան շատ նուրբ, վիրտուոզ, ոգեղեն կտավներ, եւ կան երկրային, հողեղեն կրքերի բախումներ: Այս երկու բեւեռների միջեւ ՄԱՐԴՆ է:

Հայ մեծանուն նկարչի աշխատանքները պահվում են Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսիայի հանրապետությունների թանգարաններում եւ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Հնդկաստանի եւ այլ երկրների մասնավոր հավաքածուներում:

Մարիաննա Գեւորգյան

ՄԵԾ ՄԱՍՐԻԿՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԳԵՐՈՆՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղում հանդիսավորությամբ բացվել է Գերոնտոլոգիական կենտրոնը, որտեղ կմեկնարկի սոցիալական բազմաֆունկցիոնալ ծառայությունների նոր մոդելի փորձնական ծրագիրը՝ ուղղված տարեցների կյանքի որակի բարելավմանը եւ համայնքային աջակցության ընդլայնմանը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, բացման արարողությանը ներկա են եղել Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, ոլորտային մասնագետներ, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր եւ համայնքի բնակիչներ:

Ողջույնի իր խոսքում համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը մասնավորապես նշել է.

-Սա կարեւոր քայլ է համայնքում տարեցների նկատմամբ հոգատարության, արժանապատիվ ծերության ապահովման եւ համայնքային աջակցության նոր մշակույթի ձեւավորման ճանապարհին: Հուլիսի 1-ից կմեկնարկի նաեւ «Գերո-խնամք Վարդենիս» ծրագիրը, որի նպատակն է՝ Վարդենիս համայնքում ներդնել եւ փորձարկել տարեցների համար համայնքային աջակցության եւ սոցիալական բազմաֆունկցիոնալ ծառայությունների նոր, ժամանակակից մոդել: «Մեծ Մասրիկ» գերոնտոլոգիական կենտրոնը կդառնա համայնքում տարեցների սոցիալական ներառման, համայնքային աջակցության, առողջ ծերացման եւ բազմաֆունկցիոնալ ծառայությունների զարգացման կարեւոր հարթակ՝ նպաստելով նրանց կյանքի որակի բարելավմանը եւ հասարակական ակտիվության պահպանմանը:

Համայնքի ղեկավարն իր շնորհակալությունն է հայտնել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը, «Փարոս» հիմնադրամին, «ՐԱՅՁ-Հայաստան» ծրագրի գործընկեր կազմակերպություններին, «Տարեցների առողջության եւ խնամքի ապահովման ասոցիացիային», ինչպես նաեւ առողջապահության եւ սոցիալական ոլորտների բոլոր մասնագետներին ու կազմակերպություններին, որոնց համատեղ ջանքերի շնորհիվ այս կարեւոր նախաձեռնությունը կյանքի է կոչվել:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԵՐՔԻ ՏԱԿ ԿԼԻՆԻ 35 ՀԱԶԱՐ 619,31 ՀԵԿՏԱՐ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի գյուղացիական տնտեսություններում 2026 թվականին բերքի տակ կլինի 35 հազար 619,31 հեկտար ցանքատարածություն:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչությունից, 2026 թվականին Գեղարքունիքի մարզում կատարվել է 17630,3 հեկտար գարնանացան, որից 9100,3 հեկտարը կազմում են գարնանացան գարու, 596,7 հեկտարը՝ գարնանացան ցորենի, 5570 հեկտարը՝ կարտոֆիլի, 1013 հեկտարը՝ բանջարբոստանային մշակաբույսերի, 205,4 հեկտարը՝ այլ հացահատիկի, 14,4 հեկտարը՝ կտավատի, 515, 3 հեկտարը՝ կերային բազմամյա մշակաբույսերի, 302,2 հեկտարը՝ հատիկընդեղենի, 269,98 հեկտարը՝ վարսակի ցանքերը:

2025 թվականի աշնանը Գեղարքունիքի մարզում կատարվել է 14 հազար 651,6 հեկտար աշնանացան, որից սխտորի ցանքերը կազմել են 118 հեկտար, իսկ մնացածը ցորենի արտերն են, որոնք կենսունակ են հետագա աճի ու զարգացման համար:

Նախորդ տարիներին մարզում ցանված բազմամյա կերային մշակաբույսերի ցանքատարածքները զբաղեցնում են 3234, 8 հեկտար:

Գեղարքունիքի մարզում արդեն սկսվել է անասնակերի բերքահավաքը:

15.qxd 18/07/2026 20:00 Page 5

ԲԱԶՈՒՄ ԲԵՐԴԵՐԻ ԵՐԿԻՐԸ

«...Թալինի շրջանը եղել է Հայկական աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ընդհանուր ոլորտներում եւ իր որոշակի դերն է ունեցել այնտեղ: Այդ ժամանակների վկաներն են Բազմաբերդի, Իրինդի, Ծաղկասարի, Սասնաշենի, Գառնահովիտի կիկլոպյան ամրոցները, հարյուրավոր դմբարանադաշտեր, Դաշտադեմի յայլաների վիշապակոթողները...»:

Եսայի Ասատրյան

Արագածոտնի մարզի Ներքին եւ Վերին Բազմաբերդ գյուղերի անունները պատահաբար չեն ընտրված. բազում են այս բնակավայրերի տարածքում հազարամյակների պատմությամբ բնակատեղիներ, առեղծվածներով լի կառույցներ՝ ամրոցներ, մեգալիթյան աշտարակներ, դամբարաններ եւ այլն: Տարածքում հիմնականում որոշակի հայտնի են այսպես կոչված Զաքարի ամրոցը՝ ուրարտական շրջանի ամրոց-բնակատեղին՝ Երեւան-Գյումրի նախկին ճանապարհի վրա, իսկ Ներքին Բազմաբերդի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում «Սեւ բերդ» կոչված ամրոցը դարձյալ մայրուղու հարեւանությամբ է՝ ձախ կողմում: Սակայն, երբ շրջում ես նույն ճանապարհի աջ ու ահյակ կողմերում, խճճվում ես հազարամյակների պատմությամբ կառույցների հիմքերի ու կիսակառուցվածքների պատերի արանքում: Հնագետ Լեւոն Մկրտչյանը, ով արդեն մի քանի տարի է՝ ուսումնասիրում է մեր երկրում, հատկապես Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում գոյություն ունեցող մեգալիթյան աշտարակները, գտնում է՝ դրանք հազարամյակներ առաջ կառուցվել են ծիսապաշտամունքային արարողությունների նպատակով:

2026 թվականի հունիսի վերջին Լեւոն Մկրտչյանի եւ ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող Հովիկ Հովհաննիսյանի հետ եղանք նշված բնակավայրերի տարածքում: Երեւան-Գյումրի մայրուղու 2 կողմերում՝ բլուրների վրա, պահպանվել են հազարամյակների կառույցների պատեր, հիմքեր: Ճանապարհի ձախ կողմում ուսումնասիրվեց տարածքի բազմաբերդերից մեկը: Այն 4 կողմից պարսպապատ տարածք է՝ հյուսիսային կողմում 2 կառույցների մոտ 1 մ բարձրությամբ պահպանված պատերով: Ըստ հնագետի՝ այն իշխանական տիրույթ-դղյակ է եղել՝ պարսպապատ ու պալատով: Կառույցներից մեկի մեջ պահպանվել են մոտ 1 մ բարձրությամբ 2 քառակող կոթող. մեկի վերին մասում փոսորակ է: Խորհրդային տարիների ամրոցի տարածքն օգտագործվել է որպես արտ, մելորացվել է: Բայց լավ է՝ պարիսպների հիմքերը, մոտ 1 մ բարձրությամբ պատերը մնացել են տեղում: Նույն ամրոցի հյուսիսային կողմում դարձյալ շինությունների ու պարսպապատերի հիմքեր են պահպանվել: Կան դամբարանաբլուրներ, որոնցից մի քանի քարաշարք է ծգվում: Տարածքում կան նաեւ քարեր, որոնք իրենց վրա ունեն ինչ-որ փոսորակներ՝ որոշները՝ սանդաձեւ: Այստեղ իրարից հեռու 2 քար տեսա, որոնց վրա նույնատիպ՝ Ս կամ Ա տառի պես, փոսորակներ կան: Բնությա՞ն կերտած է, թե՞ մարդու, մասնագետները կասեն: Մոտակա ոչ խորը ձորակ-հեղեղատը տուֆե հուն ունի: Որոշ հատվածներում ձորալանջերին մեծ-մեծ ժայռեր են: Մի հատվածում քարանձավ կա, քիչ հեռվում՝ սանդփոսորակներով ժայռեր: Նույն հեղեղատի ձախկողմի բլրակի վրա կանգուն է մեգալիթյան աշտարակը: Ընդհանուր տեսքը պահպանվել է, չնայած նոր ժամանակներում աշտարակի վրա քարեր են շարել: Ինչպես ընդունված է՝ բոլոր նման աշտարակները պահող բլուրները ժամանակին վերցված են եղել շրջանաձեւ պարիսպների մեջ՝ 1-3 շարքերով: Աշտարակի շրջանաձեւ պատերը՝ կառուցված մեծ-մեծ քարերով, պահպանվել են: Այս աշտարակի հարավարեւմտյան կողմից պատերով փակված ճանապարհ է իջնում ներքեւ, որտեղ կան դամբարաններ: Նմանատիպ աշտարակներ կան նաեւ Արմավիրի մարզի էջիածնի տարածաշրջանի Դաշտ գյուղի հյուսիսարեւմտյան կողմում՝ Հայտնի «Ադար Դավիթ» կոչվող հնավայրում:

Նույն օրը եղանք նաեւ Վերին Բազմամբերդում: Գյուղի կենտրոնում տուֆ քարի մեծ հիմնային կտորներ են, որոնց վրա ինչ-որ ժամանակ մոտ 70x40 սմ հիմքերով, 20 սմ խորությամբ ուղղանկյուն փոսեր են քանդակել: Երեւի ջրավազաններ են: Նույն փոսորոկներից մեկի մեջ ագուցել են 71x54x24 սմ չափերով մ. թ. ա. 3-2-րդ հազարամյակների վիշապաքարի վերին հատված: Մոտակա ցուցանակին գրված է՝ հայտնաբերվել է 2014 թվականին: Գյուղի բնակիչներից Շանթ Քարտաշյանը, ում հրավերով էինք այստեղ, տեղեկացրեց՝ այս հուշարձանը գտնվել է մոտակա դաշտերում մելորացիայի ժամանակ հավաքված քարակույտերի մեջ: Այս հատվածում նկատեցի՝ տուֆի միջով առու են բացել ոռոգման ջրատարի համար: Շանթը նաեւ ցույց տվեց մի տուֆե ժայռաբեկոր, որի վրա միջնադարյան խաչաքանդակ կա, իսկ հարեւան բնակելի տան բակում դարձյալ տուֆե հիմնային ժայռերին ուղղանկյուն փոսորակներ կան:

Բազմաբերդի հարավային մասում կիկլոպյան ամրոցատեղի է, որտեղ այժմ գյուղի գերեզմանատունն է: Ցավոք, ամրոցից քիչ հետքեր են պահպանվել: Նույն գերեզմանատանը կանգուն է միջնադարյան մի խաչքար, որի ներքին մասում կա արձանագրություն: Ըստ այդ արձանագրության՝ խաչքարը 1217թ. կանգնեցրել է Խաչոտ վարդապետը: Արձանագրության մի հատվածը մնացել է բետոնի մեջ: Գյուղի արեւելյան կողմում կա միջնադարյան ժայռափոր մատուռ՝ Սուրբ Ամենափրկիչ անվամբ: Բայց հնագետների կարծիքով՝ այն ավելի վաղ շրջանում եղել է դամբարան՝ նման Ագարակի հնավայրի ուրարտական դամբարանին: Բացի մուտքից, որն հարավային կողմից է, մատուռ-դամբարանը վերին հատվածից 2 պատուհան ունի: Մոտակայքում քարաշարք կա, որոշների վրա փոսեր են քանդակված: Հնարավոր է՝ որոշները եղել են խաչքարերի պատվանդան: Եսայի Ասատրյանը գրում է. «Վերին Բազմաբերդի կոլտնտեսության գրասենյակը կառուցվել է եկեղեցու հիմքերի վրա: Գյուղի բնակիչներ Շանթի, նրա եղբայր Նահապետի ու հարեւան, կրթությամբ բանասեր Սիփան Գասպարյանի հետ բարձրացանք հանդամասեր, որոնք նույնպես ամբողջությամբ պատված են հազարամյակների կառույցների պատերով, հիմքերով, դամբարաններով: Իրենց հայրենի տարածաշրջանին նվիրված ու լավ ծանոթ այս մարդիկ գիտեն ամեն հնավայրի մասին: Ծովի մակերեւույթից 2000 եւ ավելի մետր բարձրության վրա Մեծաձոր փոքրիկ գյուղն է, որի մոտակայքում Արագածի վրայի ձնհալքից առաջացած վարար գետակի վերին հատվածում ջրամբար կա՝ հարեւանությամբ տուֆի հանքեր: Նույն գետակի ձախ կողմում մի քանի հեկտար տարածք ժամանակին եղել է պարսպապատ: Պահպանվել են պարիսպների հիմքերը՝ մոտ 2 մ լայնությամբ: Պարսպի ներսում կան բազում դամբարաններ: Հետաքրքիր է՝ նկատեցինք 3 տապանաքար՝ առանց արձանագրության ու զարդաքանդակների, բացառությամբ՝ հավերժության նշաններ: Այս դամբարանադաշտի արեւմտյան հատվածում հեղեղատ-ձորակ կա, որի աջակողմում հսկայական քարերով պատաշարեր են: Այս հատվածը նույնպես խորհրդային տարիներին մելորացրել են եւ եղած դամբարանները, կառույցները քանդել, քարերը հավաքել մի տեղում: Նույն քարերի մեջ կան սանդաձեւ փոսորակներով մի քանի քար: Նման քարեր շատ կան հատկապես Արագածոտնի տարածքի հնավայրերում: Նույն հեղեղատի ներքին հատվածում աջակողմյան լանջը ժայռերով է պատված: Զգացվում է՝ ներքին հատվածում ժամանակին ճանապարհ են բացել, որով անցնում ենք նաեւ մենք: Ճանապարհ կոչվածի՝ գետակի կողմում պատաշար կա, իսկ մյուս կողմում ժայռերն են՝ փոսորակներով, որոնք մարդու ձեռքի աշխատանք են: Ի՞նչ նպատակով են այդ փոսորակները քանդակել հազարամյակներ առաջ, մասնագետները կասեն:

Նահապետը մեկիկ-մեկիկ ցույց է տալիս այդ քանդակված ժայռերը, որոնցից մեկը մարդու գանգի է նման: Ներքեւում՝ գետի ափին մի քանի մեծ ժայռաբեկորներ կան՝ միմյանցից գրեթե հավասար հեռավորության վրա եւ մի շարքով: Նման տեսարան կա նաեւ, արդեն տեղեկացրել եմ, Գեղարքունիքի մարզում՝ իմ ծննդավայր Գեղհովիտի Սեւ սարի հնավայրում՝ աստղադիտարանի հարեւանությամբ: Նույնը տեսել եմ Քաշաթաղի շրջանում՝ Միրիկ գյուղի ամրոցի մոտակայքում, Աղավնու ամրոցի տարածքում եւ այլուր: Մեծաձոր գյուղի հյուսիսային հատվածում դամբարանաբլուր կա, որի վրա՝ կենտրոնական մասում վիշապաքարի տեսքով կոթող կա՝ արեւմտյան կողմում խաչաքանդակներով: Միջտեղում մեծ խաչ է, որի թեւերի տակ՝ եւս երկուսը: Մեր երկրի տարբեր վայրերում կան վիշապաքարեր, որոնց վրա խաչեր են քանդակված: Օրինակ՝ Մոմիկի ծննդավայր Ուլգյուրում՝ եկեղեցու հարեւանությամբ, 2 վիշապաքար են դարձրել խաչքար: Գորիսի տարածաշրջանում՝ Քարահունջ գյուղի մոտ, Դաշտադեմի Սուրբ Քրիստափորի վանքի տարածքի գերեզմանոցում եւ այլուր: Նույն բլրից ցած՝ հարավային կողմում Մեծաձոր գյուղում պահպանվել է եզդիական հին գերեզմանոցը, որտեղ կան խոյ-տապանաքարեր: Վերին Բազմաբերդի հյուսիսային հատվածում նույնպես մեկ այլ հնադարյան ամրոցատեղի կա, որի հարեւանությամբ ջրամբար է կառուցված: Լեւոնը դրոնով նկարահանումներ է կատարում. ամրոցատեղիում պատերի հիմքեր են պահպանվել, իսկ ներքեւում արդեն այլ է: Բավականին մեծ ու հարթ տարածքում տուֆե ժայռեր են, որոնք ինչ-որ ժամանակ օգտագործվել են որպես քարհանք: Շանթը ցույց է տալիս որոշ հատվածներ, որոնց վրա պահպանվել են սորանի գործիքի քանդած փոսիկները՝ սեպերի համար: Սակայն այստեղ կան դարձյալ հազարավոր տարիներ առաջ բնակված մարդու ձեռքով կերտված քարայրներ, փոսորակներ: Մի հատված հիշեցնում է Ագարակի հնավայրը: Ժամանակին փորել ու հղկել են մոտ 7-8 մ երկարությամբ հատված, դարձրել քարայր: Աջակողմում մինչեւ վերջերս խորունկ փոս է եղել:

Մեր ուղեկիցներն ասացին՝ գյուղացիները փոսը փակել են, քանի որ գառներ եւ այլ կենդանիներ են ընկել: Այս գյուղում նույնպես կա մի զրույց-ավանդույթ, որ նշված փոսը գյուղի մյուս հատվածում գտնվող ամրոց տանող թունելի սկիզբն է: Այսինքն՝ 2 ամրոցները միմյանց հետ թունելով կապ են ունեցել: Իհարկե, սա ընդամենը վարկած է, մտքի թռիչք, բայց հնավայրը պատմում է՝ հազար ու հազար տարի առաջ այստեղ ապրել ու արարել են:

Նույն օրը դաշտում հանդիպեցինք եզդի անասնապահի, ով ասաց՝ ավելի վերեւներում մի մեծ ու խորը տանող քարանձավ կա, դամբարաններ եւ այլ հնադարյան կառույցների հիմքեր:

Զոհրաբ Ըռքոյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Գեղարքունիքի մարզում Ֆրանսիական կողմի հետ համագործակցությամբ շարունակվում են առողջապահական ծրագրերը :

ՀՀ Գեղարքունիքի մարզի եւ Ֆրանսիայի Իզերի դեպարտամենտի միջեւ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունել է ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» (AMD) ծրագրի պատասխանատու Ժան-Կլոդ Ռոսեին եւ ինժեներ Բրունո Ռեյնֆելդին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ընթացքը: Անդրադարձ է կատարվել Վ. Գետաշենի եւ Երանոսի բուժամբուլատորիաներում արդեն իրականացված կապիտալ վերանորոգման աշխատանքներին, ինչպես նաեւ Դդմաշենի բուժամբուլատորիայի շենքի նախատեսվող կապիտալ վերանորոգման ծրագրին՝ քննարկելով դրա իրականացման հետ կապված առկա հարցերն ու հնարավոր լուծումները:

Մարզպետը վստահություն է հայտնել, որ համատեղ ու հետեւողական աշխատանքի շնորհիվ կյանքի կկոչվեն նաեւ առաջիկայում նախատեսված ծրագրերը:

«Գեղամա աշխարհ»

ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 51 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում սուբվենցիոն , պետական եւ համայնքային տարբեր ծրագրերով 2018-2025 թվականներին սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 51 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 4 միլիարդ 540 միլիոն 273 հազար 636 դրամ:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, իրականացված ծրագրերից 38-ը սուբվենցիոն են՝ 2 միլիարդ 245 միլիոն 738 հազար դրամ ընդհանուր արժեքով, 5-ը՝ պետական՝ 2 միլիարդ 126 միլիոն 776 հազար դրամ արժեքով, 9-ը՝ համայնքային՝ 167 միլիոն 758 հազար 864 դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Ճամբարակ քաղաքում կառուցվել է 18 500 մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, 15450 մետր արտաքին լուսավորության ցանց, 4000 մետր ոռոգման ցանց, ոռոգման ջրամբար, Վարքաուք տիպի խաղահրապարակ, մանկական խաղահրապարակներ, պետական հիմնարկների կարիքների համար՝ արեւային ֆոտովոլտային կայաններ, 1360 մետր գազատար, հիմնանորոգվել եւ միջին նորոգման է ենթարկվել հանրապետական ու ներհամայնքային նշանակության 24799 մետր ճանապարհ, թիվ 3 եւ 5 մանկապարտեզների շենքերը, համայնքապետարանի վարչական շենքը, բազմաբնակարան 7 շենքերի տանիքները, Ճամբարակ մուտքի հենապատը եւ 2 կամուրջ, ընթացքի մեջ են Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքները՝ 1 միլիարդ 270 միլիոն դրամ արժեքով:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԿՅԱՆՔ Է ՃԱՆԱՊԱՐՀԵԼ ԻՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 29-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրը Գավառի պետական համալսարանում կայացել է 2025-2026 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:

Համալսարանը, իր առաքելությանը հավատարիմ, կյանք է ճանապարհել շրջանավարտների 29-րդ սերնդին՝ 210 բակալավրի եւ մագիստրոսի, ովքեր համալրել են ԳՊՀ ինը հազարից ավելի շրջանավարտների շարքերը:

Համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ողջունել եւ շնորհավորել է ներկաներին Սահմանադրության օրվա առթիվ, ջերմորեն շնորհավորել շրջանավարտներին եւ նրանց ծնողներին, շնորհակալություն հայտնել Գավառի պետական համալսարանի դասախոսներին, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներին եւ բոլոր բարերարներին:

Ավանդույթի համաձայն՝ հնչել է ԳՊՀ մագիստրոսի երդումը, որից հետո շրջանավարտները խորին երախտագիտություն են հայտնել սիրելի կրթօջախին, նրա հիմնադիրներին ու պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

Շրջանավարտներին դիպլոմները հանձնել եւ բարեմաղթանքի խոսքեր են հղել ԳՊՀ պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ֆակուլտետների դեկաններ Թաքուլ Ասոյանը, Մարտին Ավագյանը, ամբիոնների վարիչներ Համլետ Ղաջոյանը, Սամվել Ամիրխանյանը, Հակոբ Ղուլոյանը, Գայանե Միրիբյանը, Վարազդատ Ավետիսյանը: ,Իրավագիտություն մասնագիտության մագիստրատուրայի շրջանավարտներին դիպլոմներ հանձնել եւ հաջողության իր բանաձեւը ներկայացրել է ԳՊՀ ,Իրավագիտություն մասնագիտության 2025 թվականի շրջանավարտ Վան Սիմոնյանը:

Դիպլոմների շնորհման արարողությունն ուղեկցվել է շրջանավարտների հաջողությունների մասին պատմող ոգեշնչող տեսանյութերով, եվրոպական գործընկեր բուհերում սովորող ԳՊՀ ուսանողների առցանց շնորհավորանքներով ու բարեմաղթանքներով:

Գեղեցիկ պարային, երաժշտական կատարումներով միջոցառումը զարդարել են Գավառի արվեստի դպրոցի սաները, դաշնամուրային բաժնի աշակերտ Սամվել Խաչատրյանը, նույն դպրոցի սան Հայրապետ Հայրապետյանը, ջութակահար Էլեն Շհոյանը:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՎԵԼ Է ԵՐԱՆՈՍԻ ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՇԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի եւ Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզի դեպարտամենտալ խորհրդի միջեւ կնքված ապակենտրոնացված համագործակցության պայմանագրի շրջանակներում վերանորոգվել եւ արդիականացվել է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Երանոս գյուղի բուժամբուլատորիայի շենքը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, Երանոսի բուժամբուլատորիայի վերանորոգման եւ արդիականացման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 12 միլիոն 953 հազար դրամ, որն իրականացվել է ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» կազմակերպպության միջոցներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի մարտ ամսից եւ ավարտվել մայիս ամսին: Իրականացվել են տանիքի, հատակի, սանհանգույցների վերանորոգման, պատերի ներքին ու արտաքին հարդարման, այլ կարգի աշխատանքներ: Այժմ ընթացքի մեջ է կահավորումը: Բուժամբուլատորիան վերազինվում է սոնոգրաֆիկ սարքով, որտեղ համավճար տրամադրելու բաժին ունի ֆրանսիական կազմակերպությունը: Վերջերս Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը ֆրանսիացի գործընկերների հետ այցելել է Երանոսի բուժամբուլատորիա՝ տեղում դիտարկելու ապակենտրոնացված համագործակցության շրջանակում իրականացված աշխատանքների արդյունքները:

Մարզպետը համոզմունք է հայտնել, որ նման արդյունավետ համագործակցությունը շարունակական զարգացում կապահովի՝ նպաստելով մեր համայնքների առողջապահական ենթակառուցվածքների բարելավմանը եւ բնակիչների համար ավելի որակյալ ծառայությունների մատուցմանը:

«Գեղամա աշխարհ»

ԱՍՏՂԱԶՈՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

/սկիզբը՝ էջ 3-ում/

Մատուռի շուրջ պահպանվել են հին շինությունների հետքեր, իսկ պատմամշակութային գլխավոր արժեքն այստեղ, Սուրբ Հռիփսիմեի հյուսիսարեւելյան կողմի ժայռի վրա քանդակված մեծադիր խաչի պատկերն է՝ իր պատվանդանով, որին ներքո կա արձանագրություն՝ 1291 թվականով թվագրվող: Տարածքում փորագրված մեկ այլ ժայռախաչ թվագրվում է 1273 թվականով, իսկ մատուռի մոտ պահպանված խաչքարը թվագրված է 1547 թվականով: Սուրբ Հռիփսիմեն Աստղածորում հայտնի է նաեւ Անդոյի խաչ անունով:

Աստղածորի պատմությանը, իսկ առավելապես պահպանված վիմագրությանն ավելի մանրամասն անդրադարձել է Սեդրակ Բարխուդարյանը:

Հենց Վիմագրությունների վերծանման ճանապարհով էլ Բարխուդարյանը գնացել է Աստղածոր գյուղի միջնադարյան անվանման բացահայտմանը: Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու բակում կանգնած խաչքարերից մեկը կրում է հետեւյալ բովանդակությամբ վիմագրությունը. «ԿԱՄԱԻՆ ԱՍՏՈՒՇՈՅ ԵՍ ՄԱՐԳԱՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՒՈՅ ԵՂԲԱՅՐՆ ԻՄՈՅ ՇԱՀՆԱՏԱՐԻՆ ԵՒ ԽՈՇՆԱՏԱՐԻՆ, ՈՐ ՏՂԱ ՀԱՍԱԿԱՒ ՓՈԽՎԵՑԱՆ Ի ՔՐԻՍՏՈՍ»:

Այս արձանագրության հետքերը Բարխուդարյանին տարել են դեպի հայ մատենագրություն, որի էջերում էլ նա կարողացել է գտնել իրեն հուզող հարցի պատասխանը. «Անթվական այս արձանագրության ստույգ ժամանակը որոշելու համար պրպտեցինք եւ գտանք ձեռագիր մի հիշատակարան՝ երեք եղբայրների անունների հիշատակումով: Դա Սեւանի վանքի ժողովածուի մաս կազմող մի ճաշոց է՝ արտագրված Հովհաննես գրչի կողմից, Գեղարքունիի Կած գյուղում, 1465 թվականին: Ձեռագիրն ունի ընդարձակ հիշատակարան, որի մեջ գրիչ Հովհաննեսը հայտնում է, որ եկել է Վասպուրականի Արծկե քաղաքից եւ Գեղարքունիի Կած գյուղում հաստատվելուց հետո Մանվել եւ Ստեփանոս քահանաների խնդրանքով արտագրել ձեռագիրը: Այնուհետեւ հիշատակված են պատվիրտուների տոհմի բազմաթիվ անուններ, որոնց մի ճյուղն է Սուլթանը՝ իր երեք որդիներով՝ Շահնադար, Խոշնադար եւ Մարգար դպիր: Արձանագրության եւ Հիշատակարանի մեջ հիշատակված անունների այս շարքը ոչ մի կասկած չի թողնում, որ նրանք նույն մարդիկ են, եւ նրանց բնակավայրը Կածիք-Կած գյուղն է...Գյուղը Կածիք անունով հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի ցուցակում՝ 15 չափ հարկով, որով մեծ գյուղերի շարքում է: Իսկ «Ձամբռի» մեջ նույն Կածիքը հիշվում է որպես Մաքենյաց վանքի վիճակ, որից հայտնի է դառնում, որ որ մինչեւ 18-րդ դարի վերջերը պահպանվել է գյուղի հին՝ Կածիք-Կած անունը»,-գրում է Բարխուդարյանը:

Նրա «Դիվանում» Աստղածորից վերծանված է 44 արձանագրություն, որոնցից ընդամենը 5-ն են մինչ այդ հրապարակված եղել:

Մի շքեղ խաչքար կանգնեցված է գյուղի կենտրոնում, Սերոբ Դավեյանի բանջարանոցի մեջ: Գեղաքանդակ խաչքարի հյուսիսային կողմին արձանագրված է. «Ի ԹՎ. ՀԱՅՈՑ ԶԺԹ /1270/, ԵՍ ՇԱՀՆՇԱՀ ՈՐԴԻ ԶՈՀԷ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ, ՈՎ ԿԱՐԴԱՑԷՔ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԵՑԷՔ»: Ըստ Մեսրոպ Սմբատյանցի՝ այս խաչքարի պատվանդանին գրված է եղել. «Ես Շահնշահ եւ իմ որդի Աւագ զՈրբուծն թողաք...ոսկին ի դարն ՈԶ...»: Բարխոդարյանն այս տեքստի իսկությունը չի հաստատում, քանի որ իր այցելության պահին պատվանդանը լրիվ թաղված է եղել հողի տակ՝ քարերով ամրացված վիճակում:

Իսկ ի՞նչ է արձանարգրված Սուրբ Հռիփսիմե մատուռի մոտի ժայռախաչի պատվանդանին. «ԹՎ ՉԽ/1291/ ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՏԻՐՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄՈ :Ճ: ՏԱՐԻ ԱՊՐԵՑԱ ԶԻՆԱՒՈՐ: ՈՎ ԿԱՐԴԷՔ ՅԱՂՈՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ»: Այս ժայռափոր խաչերի գլխին ու հարավայի կողին պահպանված է հետեւյալ վիմագրությունը. «ԶԻԲ /1273/ ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ԿԱՆԿՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ՀՈԳՈՅ ՄԽԻԹԱՐԱ ՅԱՂԱԹՍ ՅԻՇԵՑԷՔ»:

Ստացվում է, որ զինավոր կամ զինվոր Տիրոսն ապրել է 100 տարի:

Վիմագրությունների առատությունը, սակայն, ակներեւ է Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու բակում ու որմերի մեջ: Բավականին շքեղ ու բազմաբովանդակ քանդակների կողքին մեզ հասել են նաեւ այստեղ մի քանի դար անընդմեջ ապրած տղամարդկանց ու կանանց անունները, որոնք կյանքից հեռացել են կամ բնական, կամ ողբերգական մահերի արդյունքում, մատաղ կամ ծեր տարիքներում: Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու վիմագիր խաչքար-տապանաքարերը կերտվել են 15-18-րդ դարերի ընթացքում, հայ սերունդներին փոխանցելով Օղլանի որդի Գրիգորի, Ովանիսի որդի Մկրտչի եւ նրա կին Սառեի, Յուսամի, Ամիրպեկի, Մխիթարի, Բայասի, Խրթչինալի, Թադոսի, Բարեքի որդի Լավանդի եւ թոռ Մանվելի, Սարուխանի որդի Պալասանի, Ստեփանոսի մայր Գուլի, Գրիգորի եղբայր Մաթեւոսի, Զոհրապի, Դովլաղ խանումի, Փախչանի, Մարգրտի, շահի, Տեր Գալոյի, Գալուստ քահանայի որդի Տրունի, Սայիբի, Միրզի, Ըսկանտարի, Սիմոնի որդի Սարգսի, Թազմամի, Գուլճհանի, Արութինի, Հէրիքի, Սիմայոնի որդի Ղազարի անունները:

Այդ վավերագրերն անթաքույց մեզ են փոխանցել նաեւ մարդկային անհուն վշտերը, որ ապրել են մարդիկ իրենց կորուսյալների կսկիծների պատճառով: Վշտակիրներից մեկը Մարտիրոսն է, ով նախ կորցրել է իր զավակներին, այնուհետ արդեն իր պատանի եղբորը: Այդ մասին վկայում են իրար մոտ կանգնած երկու գեղաքանդակ խաչքարերը, որոնց վրա պահպանված արձանագրությունները պատմում են այսպես. «ԹՎ :Ջ: /1451/ ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՅ ԵՂԲԱՅՐ ԻՄ ՍՈՒՔԻԱՍԻՆ, ՈՐ ՏՂԱ ՀԱՍԱԿԱՎ ՀԱՆԳԵԱՎ ԱՌ ՏԵՐ: ՈՎ ՅԱՂՈՒԹԷՔ, ՅԻՇԵՑԷՔ»: «ԶԱՎԱԿԱՑ ԻՄՈՑ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԱՐԿԱՎԱՔԻ»:

Գեղաքանդակ խաչքարեր են պահպանվել նաեւ Էդիկ Մկոյանի, Յուրա Ալեքսանյանի, Հոխե Օհանյանի, Վանիկ Հայրապետյանի տնամերձ հողամասերում:

Իսկ Սերոբ Դավեյանի տնամերձի եզրին պահպանված գեղաքանդակ խաչքարի պատմական արժեքն այսօր փոխլրացնում են Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների, Մեծ հայրենականում եւ Արցախյան պատերազմներում անմահացած աստղածորցիների հուշարձանները: Այդ տարածքն այսօր վերածվել է պուրակ-սրբավայրի:

2026 թվականի հունիսի դրությամբ Աստղածորն ունի 1252 տնտեսություն՝ 4435 բնակչությամբ:

Աստղածորում գործում են 1 միջնակարդ դպրոց, 1 մանկապարտեզ, առաջնային առողջության պահպանման կենտրոն եւ մշակույթի տուն:

Աստղածորն ունի նաեւ ներկայանալի Սփյուռք աշխարհի ամենատարբեր երկրներում, հատկապես՝ Ռուսաստանի դաշնությունում, Ուկրաինայում, եվրոպական տարբեր երկրներում:

Աստղածորն այսօր Հայաստանի Հանրապետության գյուղական խոշոր, հզոր ու երեւելի բնակավայրերի թվում է՝ իր պատմամշակութային ու ազգագրական անկրկելի, բազմազան արժեքներով, ավանդապաշտությամբ, աշխատասիրությամբ, արարման ու կառուցման ձգտումներով, Հայոց հայրենիքի կառուցման ու պաշտպանության մեջ խաղացած իր անուրանալի դերով: Աստղածորը մի դրախտավայր է, որտեղ ամենուր քեզ դիմավորում են շքեղ բնապատկերները, մարդու ձեռքերով կերտված նյութական բարիքներն ու հոգեւոր արժեքները, մարդկային անկեղծ, հոգեբուխ ժպիտները, որտեղ միատեղված են հայ անցյալի փառքն ու ներկայի ազգապահպան նպատակները:

Խոսրով Խլղաթյան

15.qxd 18/07/2026 20:00 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վարդոյի լուռ գործունեությունը, նրա նվիրվածությունը սեփական ընտանիքին եւ ամուսնուն այս հերոսուհու եւ «Աշնան արեւը» վիպակի նանի միջեւ զուգահեռներ անցկացնելու պատեհ առիթ են ստեղծում: Այս կանանց միջեւ բազմաթիվ ընդհանրություններ կան. նրանք լուռ են հասարակության առաջ եւ ներողամիտ են սեփական անհաջողությունների հարցում, սիրառատ եւ հոգատար են իրենց ամուսնու նկատմամբ, իրենց ունեցվածքի կազմակերպողն ու տնօրինողն են, իրենց օջախի տերն են եւ ծառան են միաժամանակ:

Զուգահեռներ անցկացնելու առիթ է նաեւ կյանքի անակնկալներին փորձառությամբ նայելու նրանց բնավորությունը: Նանը փոխանցում է իր կյանքում քննություն բռնած դասը. «Որդին հարսինն է, աղջիկը՝ փեսայինը. շաղ են գալիս՝ տանը մնում ես մենակ. լավ է, թե վատ՝ մարդն է քոնը. ամեն մեկը իրենը գտնում է, քոնը քո մարդն է»: Վարդոն էլ դաս է առնում իր ավագ բարեկամուհուց. «... Անցյալը թաղում ու վրան քար են գցում, այնուհետեւ քո մշակն է, ինչ բանեցնես՝ էն է բանելու, ինչ ուղղություն տաս՝ քո ուղղությամբ է գնալու»: Այս հերոսուհիները հանդուրժող մարդիկ են, նրանք ներողամիտ ու հաշտ են աշխարհի հետ:

Մի օր էլ Թեւիկի բախտի անիվը թեքվում է: Վարդոն, որ երկու մանկահասակի մայր էր, անհաջող հղիության հետեւանքով ձեռքից գնում է: Մինչ դաչաղը զբաղվում է գյուղում սուտ լուրեր տարածելով՝ իբրեւ կնոջը Թեւիկն է թունավորել, Սիմոնը՝ իր գործը թողած, շտապում է սար՝ փոխարինելու Թեւիկին, որպեսզի վերջինս հասնի հիվանդանոց: Իր օգնությունն է տանում նաեւ ծերության մեջ մոլորված Փառոն, սակայն ճամփին մոռանում է իր ուր գնալը:

Վարդոյի թեւերի հովանին, սերն ու հոգածությունը, ջերմությունը, հարազատությունը կորցրած, երկու որբերի հետ ինքն էլ որբացած Թեւիկը դիմում է ինքնուրույն ապրելու հոգսին. նոր կին է բերում: Այդ փոփոխությունը նկատվում է եւ՛ միջավայրում, եւ՛ ընտանիքում, ուր Շուշանը բացահայտ ծաղրի է ենթարկում տեգրոջը:

Խնդիրները ոչ թե անհատական տեսանկյունից են դիտարկվում, այլ անցյալից ներկա եւ ներկայից ապագա ավանդվող բարոյական սահմանների: Որքան էլ Թեւիկի ընտանիքում բարիք ավանդելու նախապայման լիներ նոր կնոջ մուտքը, այն ամենից առաջ պետք է ընդունելի եւ ըմբռնելի լիներ հասարակության կողմից: Հասարակության մեջ գերակա գործոն էր հարազատների շրջանակը, որում նաեւ անձնական թշնամանք կար Թեւիկի նկատմամբ: Այդպիսին էր Թեւիկի իրականությունն ու նրա ճակատագիրը, որը միայն նրանը չէր. «Բայց այդ ճակատագիրը դուրս է գալիս անհատի սահմաններից, ասում է Կ. Աղաբեկյանը, - նկատելի ու աննկատ թելերով կապվում միջավայրի սահմաններին, միախառնվում մարդկային այլ ճակատագրերի հետ, բեկվում ու անդրադարձվում հասարակական կյանքի, մարդկային հարաբերությունների լայն կապերի մեջ՝ դառնալով ժամանակի նշանը խտացնող անխարդախ վարքաբանություն ու գեղարվեստական ամփոփագիր»:

Շուշանը արհամարհում է նորահարսին, եւ իր ծանրակշիռ գործոնը տեգոր ու նրա երեխաների նկատմամբ ի ցույց դնելու համար արձակում է Թեւիկի դստեր մազակալը, որը մայրացուն էր կապել: Նորահարսից գլուխն ազատելը Շուշանի համար դառնում է կարճ ժամանակամիջոցում լուծվող խնդիր, իսկ մեծ Պեպենը իր ազնիվ հորեղբորը դեմ է անում հիվանդոտ քեռուն: Ընտանիքը վերականգնելու Թեւիկի հույսերն ի դերեւ են լինում. «...Թող ձեր խոսքը լինի,-հայտնում է նա,-առանց ձեր համաձայնության էի բերել, ուրեմն արժանի չէր, որ նա էս գյուղում մնար»:

Թեւիկի մեջ եղբոր որդիների նկատմամբ անբեկանելի են մնում սերը, պարտականության զգացումը, նրա մեջ շարունակում է գործել կորսված հարազատի ընտանիքը, ունեցվածքը պաշտպանելու մղումը: Սակայն նրա վերաբերմունքը համարժեքորեն ոչ՛ ընկալվում եւ ոչ՛ էլ գնահատվում է Վերանի եւ նրա եղբայրների կողմից: Վերջինս, գյուղապետարանում պաշտոն ստանալուց հետո, առավել բարձր ու առավել հաղթական է կարծում իրեն հորեղբոր նկատմամբ, նրա տեսանկյունից հորեղբայրը մշտապես մեղավոր է հին ու անցած պատմության համար: Առանց երկմտելու, մեծ Պեպենը, գրասենյակի մոտ՝ մարդկանց աչքի առաջ, մի հարվածով տապալում է հորեղբորը՝ ոչ այնքան ֆիզիկական ցավ պատճառելով, որքան նվաստացնելով եւ անարգելով նրան:

Շուշանի որդիները միմյանց հետ սիրով հարաբերվող եղբայրներ չեն, եւ ոչ էլ իրենց մոր երբեմնի խայտառակությունն են գիտակցում՝ որպես սեփական անպատվություն, սակայն նրանք «միասին են ատում» Թեւիկ հորեղբորը:

Ծանր վշտերի, որբության եւ հարազատների նենգության մեջ անգամ Թեւիկն անխարդախ է մնում, նա բարձր ու անգերազանցելի է մնում իր բնույթով, իր բարությամբ, ազնվությամբ: Արտաքին աշխարհին նա չի համապատասխանում՝ չլինելով նրանց պես հաշվենկատ: Նա մաքուր է մնում իր խղճի առաջ:

Թեւիկը աշխատում է, իսկ մյուսները վայելում են կյանքը, իր գյուղական համեստ հողակտորը հարեւանների բակերի առաջադիմությամբ տարեցտարի ավելի ու ավելի համեստ է դառնում, սակայն իր աշխատանքի մասն են կազմում թե՛ պետական ոչխարները եւ թե՝ ոչ պետականները, սովորական գործերի մեջ անգամ որեւէ օգնող չունի. դանակը մորթվող խոզի փորում կենդանին ձեռքից փախչում է:

Թեւիկի հետ պատահած դժբախտությունները եւ գալիք նորերը գուցե բացում են նրա աչքերը, սակայն չեն լցնում նրա սիրտը չարությամբ. նրա մեջ գործող մարդը անեղծ մարդն է: «Առավել ընդհանուր դեպքերում կյանքի անանձնական ոլորտի մեջ հիասթափություն ապրած, արտաքին հանգամանքների դեմ իր անզորությունն զգացած մարդն ապավինում է կյանքի անձնական ոլորտին, անցնում ներհոգեկան վերափոխումների միջով, որոնում հանգամանքներին դիմակայելու հնարավոր միջոցներ, դրանցից օգտվելու, դրանք իրեն ենթարկելու ճեղքեր, դառնում ճարպիկ ու խորամանկ» - նկատում է Կ. Աղաբաբյանը: Այս տողերը պատշաճ կերպով ներկայացնում են Շուշանի որդիների անցյալն ու ներկան, նրանց ապրումներն ու հոգեվիճակը, դժվարությունները հաղթահարելու կարողությունը, առաջին իսկ հնարավորության դեպքում նաեւ՝ իրավիճակի տերը դառնալու ճկունությունը: Մինչդեռ, Թեւիկի կյանքը հակադիր պատկերն ունի:

Մաթեւոսյանի ազնիվ հերոսը ոչ՛ իր անցյալի, ոչ՛ ներկայի, ոչ՛ էլ ապագայի տերն է, նա իր կամքով ընտրած կնոջ հետ ապրելու ճանապարհ անգամ չի կարողանում հարթել, ուստի զրկված է եւ՛ անձնական կյանքից եւ՛ սովորական հարաբերությունների մեջ սեփական տեսակետը հայտնելու իրավունքից:

«Տերը» վիպակը Հ. Մաթեւոսյանի գաղափարական խտացումներով լի երկերից մեկն է: Այստեղ էլ, ինչպես գրողի բազմաթիվ ստեղծագործություններում, ուշադրության առարկա է դառնում Ծմակուտը՝ իր հին ու նոր խնդիրներով, հոգսերով ու ուղերձներով:

Մեծ թվով երիտասարդներ տեղափոխվում են քաղաք՝ սովորելու եւ աշխատելու: Սոցիալիստական հանրապետությունների սոցիալ-տնտեսական զարգացումների ֆոնին, անխնա կերպով օգտագործվում են համայնքների բնական միջոցները: Գյուղի նոր Տերերը գյուղաշխարհի հետ հարաբերվում են ի պաշտոնե: Այս իրողությունների համատեքստում ,Տերըե վիպակը դառնում է հայրենի եզերքի, սեփական հոգեկերտվածքի, նախնիների թողած հոգեւոր-նյութական ժառանգության, նրանց կենսափորձի տերը լինելու աննկուն պայքարի միջավայր: Այդ պայքարը չի հասնում ցանկալի արդյունքների, քանի որ պայքարողների շրջանակը նեղ է եւ աստիճանաբար հարմարվում է իշխանությունների առաջադրած պահանջներին ու պայմաններին:

Հարցի էությունը լիարժեքորեն պատկերացնելով, Հ. Մաթեւոսյանը ցույց է տալիս, թե ինչպես է արտաքին աշխարհի ներգործությունը առավելություն ձեռք բերում գյուղական դարավոր արժեքների նկատմամբ:

Ռոստոմը ազնիվ գյուղացու լիարյուն խտացում է, որը գյուղի, նրա բնական հարստությունների, հոգեւոր-բարոյական եւ նյութական արժեքների, ավանդականության, արժանապատվության պահապանն է: Սակայն նա միակն է պահպանողական դիրքերի անսասանությամբ, քանի որ գյուղի կամքը խոնարհվել է ձեւավորված հանգամանքների առաջ:

Մաթեւոսյանը վիպակն ավարտել է դրական տրամադրությամբ՝ մատաղ սերնդի մեջ տեսնելով Ռոստոմի անավարտ գործը շարունակողներին: Երեխաները հասկացել են, թե որն է Ռոստոմի առաքելությունը, ըմբռնել են նրա ու նոր տերերի գործելաոճերի տարբերությունը: Նոր տերերին ուղղված երեխաների արհամարհանքը վկայում է այն մասին, որ նոր սերունդը արժեւորում է Ծմակուտն իր ավանդական կաղապարի մեջ, հոգեւոր եւ նյութական ժառանգությամբ հանդերձ եւ լինելու է իր գյուղի եւ իրեն ավանդված արժեքների Տերը:

«Տաշքենդ»-ի հոգեւոր-բարոյական միջավայրը նույնպես պահպանության կարիք ունի, սակայն այդ միջավայրի կրած փոփոխությունները մեծ հաշվով առաջացել են պատերազմի եւ ոչ թե երկրում սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետեւանքով: Հերոսների մի մասը (օրինակ՝ Զանդառը) իր հոգեւոր աշխարհում, իր գործունեության մեջ շարունակում է հազարավոր թելերով կապված մնալ իրեն ավանդված արժեքներին: Այս մարդկանց հետաքրքրում են թե՛ իրենց գյուղից հարս գնացող, թե գյուղ եկող հարսների վարքագիծն ու հետագա ճակատագիրը, նրանք անտարբեր չեն անգամ իրենց գյուղի ձիու ճակատագրի նկատմամբ: Նրանցից յուրաքանչյուրին առավել խորությամբ անհանգստացնում է սեփական ընտանիքի բարոյականության մակարդակը՝ լինի այդ ընտանիքի հարսի, պատանի որդու, թե մեկ այլ անդամի վարքով պայմանավորված: Նրանց միջավայրին պատկանող, նրանց բարոյական շնչով դաստիարակված մարդիկ, շարունակում են բարության, ազնվության, խոհեմության օրինակներ լինել, ինչպիսին Թեւիկն է: Թեւիկի ողջամտությամբ ներվում է Շուշանի եւ՛ հին մեղքը, եւ՛ նոր մեղքը (նորահարսի վտարումը), եւ եղբորորդիների անարդարացի չարությունը, նենգությունը: Ոչ՛ կյանքի դառնությունները, ոչ՛ ծանր ու տեւական աշխատանքը, ոչ՛ եղբորորդիների արհամարհական, ստորացուցիչ վերաբերմունքը չեն կարողանում խաթարել, բեկել Թեւիկի մարդկային բարձր արժանապատվությունը, մարդ մնալու գիտակցությունը, եղբոր այրուն, որբերին, նրա օջախին հովանի լինելու մեծահոգությունը:

Ավանդականությանը հավատարիմ հերոսները, տրամաբանորեն, համարժեք վարքուբարք են ակնկալում նոր սերնդից: Այս դժվար լուծվող խնդրի պատասխանատուն դառնում են Զանդառը, Օհանը, Թեւիկը, Վարդոն, Նիկալը, Սիմոնը, Փառոն եւ ուրիշներ: Զանդառի ուշադրությունը նորահարսի նկատմամբ, Վարդոյի ներողամտությունը Շուշանի հանդեպ, Օհանի եղբայրական հովանին Թեւիկի վրա, այս ամենը վկայում են հերոսների համեստության, ավանդականության, նրանցում արմատացած արժեհամակարգերի մասին: Նիկալն ու Փառոն իրենք խնամակալների կարիք ունեն ծերունական տարիքի մեջ, մինչդեռ նրանց կերպը, որակը, հարահաս, անդադրում տեսակը չի կարող աչք փակել կարիքի մեջ գտնվողի վրա: Ժամանակը զրկել է նրանց սիրելի, հարազատ մարդկանցից, սակայն անզոր է եղել զրկելու երկաթե կամքից, հոգեւոր-բարոյական արժեքներից: Այս տեսանկյունից Թեւիկի (որը Շուշանի եւ նրա որդիների եւ մշակն է, եւ տնտեսվարը, եւ հնձվորը) դիրքերը ավելի ամուր են, քան պետական պաշտոն զբաղեցնող եղբորորդունը: Վերանի ձեռքբերումը ընդամենն ամրագրված է թղթի վրա եւ կարող է այսօր կամ վաղը փոփոխության ենթարկվել, մինչդեռ Թեւիկինը՝ հոգում ամրագրված ձեռքբերում է:

Ռուզան Վարդանյան

ՇՈՂԱԿԱԹ ԳՅՈՒՂՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 8 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 20 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 377 միլիոն 445 հազար 997 դրամ:

Իրականացված ծրագրերից 18-ը սուբվենցիոն են՝ 341 միլիոն 945 հազար 997 դրամ ընդհանուր արժեքով, 1-ը՝ պետական՝ 864 միլիոն 500 հազար դրամ արժեքով, եւ 1-ը՝ համայնքային՝ 171 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Շողակաթում կառուցվել է 4320 մետր արտաքին լուսավորության ցանց, 4369 մետր խմելու ջրագծի ներքին ցանց, 4112 մետր «Խելացի ոռոգման» ջրատար ցանց, 30 հազար լիտր տարողության ոռոգման ջրամբար, 95 կիլովատտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայան, 2 հակակարկտային կայան, հիմնանորոգվել հանրապետական ու ներհամայնքային նշանակության 13897 գծամետր ճանապարհ:



Պետական ծրագրի շրջանակներում, շուրջ 864 միլիոն 500 հազար դրամ արժեքով, հիմնանորոգվել է Սեւան-Շողակաթ-Վարդենիս հանրապետական նշանակության ավտոճանապարհի՝ Շողակաթի վարչական տարածքով անցնող շուրջ 9500 գծամետր երկարության հատվածը:

Համայնքային ծրագրով, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի եւ ՀՀ Կառավարության հետ համագործակցությամբ, 171 միլիոն դրամ արժեքով, կառուցվել է «Խելացի ոռոգման» համակարգ եւ 30 հազար լիտր տարողության ոռոգման ջրամբար, որի արդյունքում Շողակաթ եւ Արտանիշ բնակավայրերում ոռոգելի է դառնում 300 հեկտար հողատարածք:

«Գեղամա աշխարհ»

15.qxd 18/07/2026 20:00 Page 8

ՍԱՐՈՒԽԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ԿԱՅԱՑԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՇՎԵՏՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղի մշակույթի տանը տեղի է ունեցել հայկական մշակույթին եւ ազգային արվեստին նվիրված հաշվետու միջոցառում, որի ընթացքում ներկայացվել են մշակութային բաժինների սաների տարվա ստեղծագործական աշխատանքներն ու ձեռքբերումները:

Միջոցառման շրջանակում կազմակերպվել էին կավագործության, մանրանկարչության, հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի եւ գորգագործության աշխատանքների ցուցադրություններ, որոնք ներկայացնում էին սաների ստեղծագործական կարողությունները, ազգային արժեքների նկատմամբ նրանց հետաքրքրությունն ու սերը:

Միջոցառման ընթացքում մասնակիցները ներկայացրել են հայկական մշակույթի հարուստ ժառանգությունը՝ անդրադառնալով նրա պատմամշակութային արժեքներին, ճարտարապետությանը, խաչքարային արվեստին եւ այն բացառիկ դերակատարությանը, որն այն ունի մեր ազգային ինքնության պահպանման գործում:

Հնչել են խոսքեր հայ մշակույթի մեծանուն ներկայացուցիչների՝ Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Հովհաննես Այվազովսկու եւ Շառլ Ազնավուրի ստեղծագործական ժառանգության մասին՝ ընդգծելով նրանց անգնահատելի ներդրումը համաշխարհային մշակույթի գանձարանում:

Հաշվետու միջոցառումը դարձավ մշակութային տարվա գեղեցիկ ամփոփում՝ մեկտեղելով ազգային արվեստի տարբեր ճյուղերը, սաների ստեղծագործական ձեռքբերումներն ու հայկական մշակույթի նկատմամբ սերն ու նվիրումը: Այս օրերին հաշվետու միջոցառումներ են տեղի ունենում նաեւ Գավառ համայնքի արվեստի ու մշակույթի մյուս կրթօջախներում, որտեղ մեր շնորհալի սաները հանդես են գալիս բարձրարվեստ կատարումներով կամ իրենց ստեղծագործությունների ցուցադրումներով:

Ալվարդ Մանուկյան

ՀՈՒՆԻՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԵՎԱՆԻ ԱՓԱՄԵՐՋ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԵԼ Է 61 ՄԻԱՎՈՐ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

«Սեւան» ազգային պարկ»-ի եւ գործընկեր կառույցների համատեղ եւ համակարգված աշխատանքի արդյունքում 2026 թվականի հունիս ամսվա ընթացքում Սեւանա լճի 1905 մետր բացարձակ նիշից ներքեւ գտնվող տարածքներում իրականացվել են ապօրինի կառուցապատումների ապամոնտաժման աշխատանքներ:

Ինչպես տեղեկացրին «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ աշխատակազմից, ձեռնարկված միջոցառումների արդյունքում միայն հունիս ամսվա ընթացքում ապամոնտաժվել են թվով 61 միավոր ինքնակամ կառուցված շենք-շինություններ եւ հենապատեր:

2026 թվականի հունվարից հունիս ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքում ապամոնտաժվել է 174 միավոր ինքնակամ կառուցված շենք-շինություն եւ հենապատ:

Իսկ, ընդհանուր առմամբ, 2025–2026 թվականների ընթացքում ձեռնարկված միջոցառումների արդյունքում ապամոնտաժվել է ընդհանուր թվով 235 միավոր ինքնակամ կառուցված շենք-շինություն եւ հենապատ:

Միաժամանակ «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ տնօրինությունը տեղեկացնում եւ հորդորում է բոլոր այն վարձակալներին, որոնց կողմից օգտագործվող տարածքներում առկա են 1905 մետր բացարձակ նիշից ներքեւ կառուցված ինքնակամ շինություններ, հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնել դրանց կամավոր ապամոնտաժումը՝ խուսափելով օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումից:

«Գեղամա աշխարհ»

ԾԱՂԿՈՒՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ԿԱՌՈՒՅՑԱՊԱՏՄԱՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծաղկունք գյուղի կենտրոնում իրականացվել են կառուցապատման ու բարեկարգման աշխատանքներ:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծաղկունք բնակավայրի կենտրոնական հատվածի բարեկարգում, TUR-17» ենթածրագիրն իրականացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

Ենթածրագրի շրջանակներում իրականացվել է Ծաղկունք գյուղի կենտրոնական հատվածով անցնող ճանապարհի 180 գծամետր հատվածի երկաթբետոնե ճանապարհի եւ ավտոկայանատեղիի կառուցում: Միաժամանակ բարեկարգվել է գյուղում գտնվող այգին՝ լուսավորության ցանցի անցկացմամբ, կոմունալ հարմարություններով:

Սալիկապատվել է կենտրոնական հատվածից դեպի Սուրբ Հարություն եկեղեցի տանող ճանապարհը, անցկացվել է շուրջ 900 մետր ջրահեռացման համակարգ դեպի Հրազդան գետ:

Աշխատանքների արդյունքում Ծաղկունքի կենտրոնական հատվածը ստացել է նոր տեսք, իսկ գյուղի փոքրիկներն արդեն ունեն իրենց ժամանցն ու հանգիստը կազմակերպելու հարմարավետ ու անվտանգ միջավայր:

Արմինե Ղուկասյան

ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 11 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Կարճաղբյուր գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սուբվենցիոն եւ պետական ծրագրերով սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 11 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 965 միլիոն 692 հազար 530 դրամ:

Իրականացված ծրագրերից 9-ը սուբվենցիոն են՝ 239 միլիոն դրամ ընդհանուր արժեքով, եւ 2-ը՝ պետական՝ 726 միլիոն 200 հազար դրամ արժեքով:

Իրականացված աշխատանքների արդյունքում 2018-2025 թվականներին Կարճաղբյուրում կառուցվել է 3872 մետր խմելու ջրատարի արտաքին ցանց, 4568 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել 4150 մետր ներհամայնքային նշանակության ճանապարհ, 1 կամուրջ:

Պետական ծրագրով հիմնանորոգվել է 2200 մետր երկարության ճանապարհ եւ 1 կամուրջ, «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները : Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի նոյեմբերից, 451 միլիոն 200 հազար դրամ արժեքով եւ կավարտվեն 2026 թվականի հուլիսին:

2026 թվականի հուլիսի 15-ի դրությամբ դպրոցի վերանորոգման աշխատանքներն ավարտված են շուրջ 90 տոկոսով:

«Գեղամա աշխարհ»

ԱԽՊՐԱԶՈՐՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 5 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ախպրաձոր գյուղում 2018-2025 թվականներին սուբվենցիոն ու պետական ծրագրերի շրջանակներում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 5 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 146 միլիոն 700 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 4-ը սուբվենցիոն են՝ 86 միլիոն 700 հազար դրամ արժեքով, եւ մեկը՝ պետական՝ 60 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականներին Ախպրաձորում կառուցվել է 3600 մետր խմելու, 450 մետր ոռոգման ջրատար, 3300 մետր արտաքին լուսավորության ցանց, ասֆալտապատվել 500 մետր ներհամայնքային նշանակության ճանապարհ, կոպճապատվել Մաքենիս-Ախպրաձոր մարզային նշանակության ավտոճանապարհի 3 կիլոմետր հատվածը:

Ճանապարհաշինական աշխատանքներն իրականացվել են պետական ծրագրի շրջանակներում:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՍԿՍՎԵԼ ԵՆ ՋՐԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

Սեւանա լճից ոռոգման նպատակներով իրականացվող ջրբացթողումներն այս տարի սկսվել են հուլիսի առաջին օրերից: ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի տվյալներով՝ 2026 թվականի հուլիսի 15-ի դրությամբ Սեւանա լճից ոռոգման նպատակներով արդեն բաց է թողնվել 3 միլիոն 984 հազար խորանարդ մետր ջուր: 2026 թվականի հունվարից մինչ հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 153 միլիոն 751 հազար խորանարդ մետր ջուր: 2026 թվականի հուլիսի 15-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 80 սանտիմետր բարձրության վրա, ինչը 58 սանտիմետրով բարձր է այս տարվա հունվարի վերջին գրանցված նիշից:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 17. 07. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: